ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ն ա խ ա գ ի ծ*

Ֆ. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունը ինքնուրույն պետականություն հիմնելու՝ հայ ժողովրդի դարավոր իղձերի արդի մարմնավորումն է, որ սկիզբ է առնում 1918 թ. մայիսին Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումով։ Ցեղասպանության արհավիրքներն անցած ժողովուրդը կարողացավ իր մեջ կենսական ուժեր գտնել և իր լավագույն զավակների սխրանքի ու արյան գնով երբևմնի ընդարձակ հայրենիքի մի հատվածում վերականգնեց դարեր առաջ կորցրած պետականությունը։ Այն գոյատևեց շուրջ յոթ տասնամյակ՝ հակասություններով ու դրամատիկ ընթացքով բնութագրվող մի ժամանակաշրջան, երբ իրավունքի աստիճանի բարձրացված գաղափարախոսական դրույթների ու բռնության կողքին, դրանց հետ միաժամանակ, ստեղծվում էին նաև մնայուն մտավոր և հոգևոր արժեքներ։

Երկրորդ հանրապետությունը փլուզվեց ԽՍՀՄ-ի հետ միասին։ Պատմությունը բացառիկ հնարավորություններ ստեղծեց հայ պետականության ինքնիշխանության վերականգնման համար։ 1990 թ. Հայաստանի գերագույն խորհուրդն ընդունեց անկախության մասին Հռչակագիր, որտեղ ամրագրվեցին սեփական պետականության կառուցման նպատակներն ու սկզբունքները։ Այդպիսի նպատակների ու սկզբունքների իրականացման համար հիմնարար նշանակություն ունի սահմանադրության ընդունումը՝ որպես հասարակական դաշինքի ամրագրում ազգի և նրա նորաստեղծ պետության միջև։ Ազգը պարտավորվում է իր ամբողջ ներուժը և ստեղծագործական կարողությունները ներդնել հանրապետության շինարարության կարևորագույն գործում՝ առաջնորդվելով իր ազգային լավագույն ավանդույթներով և իրավունքի արդիական ու համամարդկային արժեքներով։

Հայ ժողովուրդը ապրում է միջազգային հանրության մեջ և իր հարաբերությունները այլ ազգերի ու պետությունների հետ կայացնում է փոխադարձ հարգանքի, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, համագործակցության և բարիդրացիական կապերի հիման վրա։ Վերստեղծված հայ պետականության խնդիրներից է հայ ազգի առավել գործուն ներգրավումը ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների աշխատանքներին։

Սահմանադրությունը մեկնում է սոցիալական արդարության և անհատի ու ազգի իրավունքների հանրաճանաչ հիմնադրույթներից։ Դրանցով է պայմանավորված նաև ժողովրդավարական պետության կարևորագույն սկզբունքների՝ իշխանությունների տարանջատման, անմիջական ժողովրդավարության և ներկայացուցչական ժողովրդավարության իրականացման իրավական ամրագրումը սույն Սահմանադրության մեջ։

Հոդված 1—1. Հայաստանի Հանրապետությունը իրավունքի և աշխատանքի վրա հիմնված սոցիալական արդարության ժողովրդավարական պետություն է։

2. Ազգային ինքնիշխանությունը հայ ժողովրդի բնածին և անօտարելի հատկանիշն է։ Այն իրացվում է բացառապես հայ ազգի կողմից անմիջականորեն կամ սույն սահմանադրությամբ ամրագրված սահմաններում ու եղանակներով, իր իսկ կողմից ուղղակի կամ անուղղակի ձևով կազմավորվող Հանրապետության հաստատությունների միջոցով։

3. Ազգի որևէ հատված, քաղաքական կուսակցություն կամ անհատ չեն կարող հանդես գալ ժողովրդի անունից և յուրացնել նրան պատկանող սուվերենությունը։

Հոդված 2—1. Հայաստանի Հանրապետությունը նրա տարածքում բնակվող աշխարհասփյուռ բոլոր հայերի հայրենիքն է, նրանց համազգային ընդհանուր պետական տունը։

---

* *Խմբագրության կողմից — Ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը չի հետամտում որևէ կուսակցական կամ այլ խմբային շահեր։ Այն կազմված է սահմանադրական շինարարության անցյալի և արդի փորձի հաշվառմամբ և հետապնդում է սոսկ հայ պետականության ամրապնդման նպատակը։ Հոդվածը խմբագրությունը ստացել է դեռևս այս տարվա ապրիլ ամսին, սակայն տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել ավելի վաղ տպագրել։*

2. Հանրապետության կառուցումը և բարգավաճումը, պետությունների միջազգային հանրակցությունում նրա արժանավայել տեղ զբաղեցնելը բոլոր հայերի նվիրական գործն է։

Հոդված 3—1. Հայաստանի Հանրապետությունը չի ճանաչում և վճռականորեն դատապարտում է առանց իր մասնակցության կնքված Հայաստան աշխարհի տարածքը անարգարացիորեն օտարած միջազգային և ոչ մի պայմանագիր։

2. Հայ ժողովուրդն իր անկոտրում կամքով և մեծ հավատով է սպասում իր դատի արդարացի լուծմանը։

Հոդված 4. Հայ ժողովուրդը հավիտյանս չի ճանաչում իր ինքնորոշման իրավունքի սահմանափակմանն ուղղված ներպետական կամ միջազգային իրավական և ոչ մի ակտ։

Հոդված 5. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է մարդու բնածին ու անօտարելի իրավունքների անձեռնմխելիությունը և իր գերագույն նպատակն է համարում ինչպես դրանք իրացնելը, այնպես էլ մարդկանց համար արժանապատիվ և անվտանգ կյանք ապահովելը։

Հոդված 6. Հանրապետության բոլոր հաստատությունները գործում են ժողովրդի կառավարում, ժողովրդի միջոցով և ժողովրդի համար» նշանարանով, յուրաքանչյուր անհատի և բոլորի նկատմամբ օրենքի գերակայության սկզբունքով։

Հոդված 7. Քաղաքական կուսակցությունները, դրանց դաշնությունները և հասարակաքաղաքական շարժումները նպաստում են ազգային կամքի ձևավորմանը և քվեարկության միջոցով այդ կամքն արտահայտելուն։ Դրանք կազմավորվում և գործում են ազատ, օրենքով նախատեսված կարգով, պայմանով, եթե դրանց ծրագիրն ու գործունեությունը չի հակասում ազգային-սուվերենությանը և Սահմանադրությանը։

Հոդված 8. Հայաստանի իրավական համակարգը ներդաշնակ է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած նորմերին։ Միջազգային պայմանագրային նորմերը, որոնց մասնակիցն է Հայաստանի Հանրապետությունը, կիրառության մեջ են դրվում միայն Համազգային ժողովում դրանց վավերացումից հետո և կազմում են Հանրապետության ներքին իրավունքի բաղկացուցիչ մասը։

Հոդված 9. Հանրապետության և ոչ մի հաստատություն չի կարող կնքել Սահմանադրությանը հակասող որևէ միջազգային պայմանագիր։

Հոդված 10—1. Պետությունը և հայ Առաքելական Եկեղեցին միմյանցից անկախ ու սուվերեն են։ Նրանց հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով։

2. Պետությունը հարգում է և չի սահմանափակում կրոնական բոլոր դավանանքների ազատությունը, եթե դրանք չեն քարոզում ազգային, ցեղային կամ կրոնական թշնամանք, իրենց գործունեությամբ չեն հակասում հայոց պետականության զարգացմանը։

Հոդված 11. Հայաստանի Հանրապետությունը մերժում է պատերազմը, որպես միջազգային վեճերի և ազգամիջյան հարաբերությունների կարգավորման միջոց և իր պատրաստակամությունն է հայտնում բարիդրացիական հարաբերություններ հաստատել բոլոր հարևանների, աշխարհի բոլոր երկրների ժողովուրդների հետ և ակտիվորեն նպաստել աշխարհի բոլոր ժողովուրդների խաղաղության, անվտանգության, արդարության նպատակներ հետապնդող միջազգային կազմակերպությունների գործունեությանը։

Հոդված 12 —1. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է։ Այն չի սահմանափակում ազգային փոքրամասնությունների համար օրենսդրությամբ նախատեսված իրավունքները։

2. Պետությունը հոգ է տանում և համապատասխան միջոցներ է ձեռնարկում էթնիկական փոքրամասնությունների մշակույթի և ազգային լեզվով կրթական գործի կազմակերպման ու զարգացման համար։

Հոդված 13. Հայաստանի Հանրապետությունը իր խնդիրն է համարում և անհրաժեշտ միջոցներով նպաստում է մշակույթի, գիտության, կրթության, առողջապահության և բնապահպանության գործի համակողմանի զարգացմանը։

Ազգի պատմական և մշակութային ժառանգության պահպանումը պետության և յուրաքանչյուր հայի պարտականությունն է։

Հոդված 14. Հայաստանի Հանրապետությունը իր պարտքն է համարում համակողմանիորեն զարգացնել մայր հայրենիքի մշակութային, կրթական ու տնտեսական կապերը արտերկրի հայ համայնքների հետ, անհրաժեշտ միջոցներ հատկացնել նրանց՝ մայրենի լեզվով կրթական համակարգի ստեղծմանն ու զարգացմանը։

Հոդված 15. Հանրապետությունը համակողմանիորեն խրախուսում է ներդաղթը։ Կառավարությունը, հանրապետության տնտեսական ներուժի զարգացմանը համապատասխան, հայրե-

նաղարձների մշտական բնակության համար անհրաժեշտ կենսապայմաններ ստեղծելու նպատակով յուրաքանչյուր տարի որոշակի բյուջետային հատկացումներ է նախատեսում։

Գլուխ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 16. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը որոշվում է ոչ միայն հանրապետության տարածքային սահմաններով, այլ նաև արյան սկզբունքով պայմանավորված, հայոց պետության համազգային բնույթով։

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը պետական սահմաններ չի ճանաչում։

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են համարվում.

Հանրապետության տարածքում մշտական բնակություն հաստատած նախկին Հայկական ԽՍՀ և նախկին ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները՝ անկախ ազգային և ցեղային պատկանելությունից, սեռից, դավանանքից և հանրապետության տարածքում բնակության տևականությունից։

Իրենց որոշակի և սահմանված ձևով արտահայտված կամքին համապատասխան՝ հանրապետության պետական սահմաններից դուրս բնակվող բոլոր հայազգի անձինք։

Ոչ ոք չի կարող զրկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից։ Քաղաքացիությունից դուրս գալը յուրաքանչյուր անհատի իրավունքն է, պայմանով, եթե քաղաքացիությունից դուրս գալու պահին անձն ունի նաև այլ քաղաքացիություն կամ այն ձևոք է բերում հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հետ միաժամանակ։

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու և քաղաքացիությունից դուրս գալու հիմքերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրգանական օրենքով։

Հոդված 17. Մարդու գերագույն իրավունքը ի վերուստ տրված և անօտարելի կյանքի իրավունքն է։ Հայաստանի Հանրապետության տարածքում այն կարող է դադարեցվել միայն բնական ճանապարհով, այլ կերպ այդ իրավունքից դիտավորյալ զրկելը ծանրագույն հանցագործություն է և պատժվում է օրենքի ամբողջ խստությամբ։

Այս հոդվածի խախտում չի համարվում՝

1. Եթե որևէ մեկը կամ որևէ խումբ դրանից զրկվում է մի այնպիսի ուժի գործադրման հետևանքով, որը կիրառվել է սեփական կամ այլ անձի կյանքը ապահովելու, դրան սպառնացող անմիջական վտանգը կանխելու, սեփական տունն ու կայքը կամ որևէ սեփականություն ոտնձգությունից պաշտպանելու նպատակով։

2. Այնպիսի դեպքերում և հանգամանքներում, երբ դիտավորյալ սպանությունն ուղեկցվել է Հանրապետության սահմանադրական եղանակով կազմավորված իշխանությունների տապալմանն ուղղված անօրինական զինված ապստամբությունը կամ անօրինական զինված խռովությունը ճնշելու պայմաններում։

3. Բացառապես օրենքով ամրագրված միայն այնպիսի հատուկ դեպքերում, երբ սպանվողը փախուստի միջոցով փորձել է խուսափել ծանր հանցագործության համար պատասխանատվության ենթարկվելուց կամ այդպիսի պատասխանատվությունից խուսափելիս։

Հոդված 18—1. Պետությունը երաշխավորում է անձի ազատությունը և արժանապատվությունը։

2. Անձի ազատության ցանկացած սահմանափակում, անձնական խուզարկություն, նրան պատկանող գույքի խուզարկություն, իրերի կամ թղթակցության զննում այլ կերպ, քան բացառապես օրենքով նախատեսված կարգով, իշխանազանցություն կամ կամայականություն է և պատժվում է օրենքով։

3. Այս կամ այն ձևով ազատության սահմանափակման ենթարկված անձանց նկատմամբ ֆիզիկական կամ բարոյական հարկադրանք կիրառելը պատժվում է օրենքով։

Հոդված 19—1. Յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ազատորեն զարգացնել իր անձը՝ այլ անձանց իրավունքները հարգելու և հասարակական կարգը չխախտելու պայմանով։

2. Հանրապետության որևէ բնակիչ չի կարող հարկադրվել անելու այն, ինչը ուղղակիորեն օրենքով նախատեսված չէ և ազատ է անելու այն, ինչը օրենքով արգելված չէ։

Հոդված 20—1. Հանրապետության քաղաքացիները անկախ ազգային պատկանելությունից, սեռից, հայերեն լեզվի իմացությունից, դավանանքից, քաղաքական համոզմունքներից, գույ-

քային և հասարակական վիճակից, օրենքի առաջ հավասար են։

2. Հասարակական և ոչ մի խումբ, գործունեության որևէ բնագավառ մյուսների նկատմամբ առավելություն չունի։

3. Պետական ծառայողների ոչ մի տեսակի կամ առանձին պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքների անդամների համար օրենքը կամ այլ իրավական ակտ չի կարող արտոնյալ պայմաններ ստեղծել, բացի հատուկ օրենքով սահմանվող այնպիսի լրացուցիչ իրավունքներից, որոնք անհրաժեշտ են և անմիջականորեն կապված նրանց ծառայողական գործունեության հետ։

Հոդված 21.—Պետությունը պարտավորվում է վերացնել քաղաքացիների իրական ազատությանը և հավասարությանը հակասող տնտեսական և սոցիալական բնույթի արգելքները, յուրաքանչյուրի համար ստեղծել երկրի տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքին արդյունավետորեն մասնակցելու հավասար պայմաններ։

Հոդված 22—1. Պետությունը ճանաչում է յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի իրավունքը և անհրաժեշտ տնտեսական ու սոցիալական պայմաններ է ստեղծում այդ իրավունքի ապահովման համար։

2. Այդ իրավունքը չի կարող սահմանափակվել տարիքի, կենսաթոշակի անցնելու, քաղաքական կամ որևէ այլ նկատառումով։ Աշխատանքի իրավունքը կարող է սահմանափակվել միայն բնական ճանապարհով, բացառապես առողջական կամ ֆիզիկական վիճակի անկարողությամբ։

3. Աշխատանքի իրավունքը և դրա արդարացի վարձատրության իրավունքն անբաժան են։ Վարձատրությունը տրվում է ըստ կատարած աշխատանքի քանակի և որակի, բայց ոչ պակաս, քան պետության կողմից սահմանվող արժանավայել ապրելու համար անհրաժեշտ նվազագույնի չափով։

4. Աշխատանքը նաև պարտականություն է։ Յուրաքանչյուր ոք պարտավոր է սեփական ընտրությամբ, իր ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողություններին համապատասխան նպաստել հասարակության նյութական, հոգևոր և բարոյական առաջընթացին։

Հոդված 23. Պետությունը օրենսդրությամբ սահմանված կարգով երաշխավորում է աշխատողների գործադուլի իրավունքը։

Հոդված 24. Յուրաքանչյուր աշխատող արհմիութենական կազմակերպության կամ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով օրենքով սահմանված կարգով և օրենքի սահմաններում մասնակցում է աշխատանքի պայմանների որոշմանը և ձեռնարկության կառավարմանը։

Հոդված 25—1. Կնոջ աշխատանքի իրավունքը երաշխավորվում է պետության և հասարակության հատուկ հոգատարությամբ։

2. Կնոջ և տղամարդու աշխատանքի հասարակական արժեքը հավասար են։ Միևնույն աշխատանքի համար նրանց վարձատրությունը հավասար է։

3. Կնոջ աշխատանքի պայմանները, նրա ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնելով հանդերձ, չպետք է խանդարեն ընտանիքի, և հատկապես երեխաների հանդեպ նրա մայրական պարտականությունների կատարմանը։

Հոդված 26—1. Անչափահասների աշխատանքը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, նրանց առողջության և դաստիարակության համար ոչ վնասակար բնագավառներում, բացառապես մանկավարժական և առողջապահական հիմնարկների հատուկ թույլտվությամբ։

2. Անչափահասների աշխատանքի ընդունվելու և աշխատանքի մյուս պայմանները կարգավորվում են միայն հատուկ օրենքով։

3. Անչափահասների աշխատանքը չափահասների հետ հավասար աշխատանքի համար վարձատրվում է հավասար չափով։

Հոդված 27—1. Աշխատանքի պայմանների պահպանությունն ապահովելու, աշխատողների սոցիալական իրավունքների ապահովությունը կազմակերպելու, նրանց ընդհանուր տնտեսական շահերը ներկայացնելու նպատակով արհեստակցական միությունների ստեղծումն ազատ է։

2. Աշխատողի՝ արհեստակցական միության մեջ միավորվելու իրավունքը ազատ է, ազատ է նաև աշխատողի՝ արհեստակցական միություն ընտրելու իրավունքը։

3. Արհեստակցական միությունը և նրա անդամների փոխհարաբերությունները կարգավորվում են բացառապես միության Կանոնադրությամբ։

4. Արհեստակցական միությունը իր Կանոնադրության գրանցման պահից գործում է որպես իրավաբանական անձ և պետական մարմիններում, այդ թվում և դատարանում, ցան-

կացած այլ կազմակերպություններում ներկայացնում է աշխատողների խմբային իրավունքներն ու շահերը։

5. Արհեստակցական միությունների ստեղծման համար օրենքը կարող է ներկայացնել միայն հավուր պատշաճի գրանցվելու և գործունեության մեջ ժողովրդավարություն ապահովող պահանջներ։

6. Արհմիության անդամի և արհմիության միջև առաջացող վեճերը կողմերից յուրաքանչյուրի ցանկությամբ կարող է լուծվել դատական կարգով։

7. Արհմիությանը կարելի է պարտավորեցնել բացառապես դատական կարգով, դատարանի օրինական ուժ ստացած որոշմամբ։

Հոդված 28. Գրագրությունը, փոստային, հեռախոսային, հեռագրերի ազատությունն ու գաղտնիությունը անխախտ են և կարող են սահմանափակվել բացառապես օրենքով նախատեսված հիմքերով և օրենքով նախատեսված երաշխիքներն ապահովելով։

Հոդված 29—1. Յուրաքանչյուր քաղաքացի օժտված է տեղաշարժման և Հայաստանի ցանկացած վայրում մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու իրավունքով։ Սահմանափակումները կարող են լինել միայն օրենքով նախատեսված ընդհանուր բնույթի, բացառապես առողջապահական, հասարակական կարգի և ազգային անվտանգության ապահովման նկատառումներով։ Քաղաքական շարժառիթներով որևէ սահմանափակում անօրինական է։

2. Յուրաքանչյուր քաղաքացի օրենքով նախատեսված պայմաններով կարող է հեռանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից և վերադառնալ։

Հոդված 30. Բնակարանի անձեռնմխելիությունը սրբություն է։ Գիշերը, առանց տանտիրոջ համաձայնության ոչ ոք չի կարող բնակարան մտնել, իսկ ցերեկը՝ առանց իրավասու մարմնի գրավոր կարգադրության։ Խուզարկություն կամ զննում կարող է կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով։

Բնակարանի անձեռնմխելիությունը խախտող միջոցառումներ կարող են իրացվել միայն օրենքով սահմանված կարգով, բացառապես հասարակությանը կամ մարդկանց կյանքին, հասարակական կարգի պաշտպանությանը անմիջականորեն սպառնացող վտանգը կանխելու նպատակով, օրենքով նախատեսված դեպքերում։

Հոդված 31—1. Յուրաքանչյուր ոք կարող է ազատ արտահայտել և տարածել իր կարծիքը բանավոր կամ գրավոր, արտահայտել այն հոգևոր ստեղծագործության որևէ ձևով և տարածել ցանկացած կերպ։

2. Մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը և զանգվածային լրատվության մյուս միջոցներն ազատ են և թույլտվության կամ գրաքննության ենթակա չեն։

Այս իրավունքների սահմանները որոշվում են ընդհանուր բնույթի օրենքներով։

3. Արվեստը և գիտությունը, դրանց դասավանդումը ազատ են։ Դասավանդման ազատությունը չի ազատում Սահմանադրությանը հավատարիմ մնալու և օրենքը կատարելու պարտականությունից։

Հոդված 32—1. Կրոնական հավատամքի դրսևորման ցանկացած ձևի, խղճի, դավանական և հասարակական հայացքների քարոզչությունն ազատ է։

2. Կրոնական ծեսերի անարգել կատարումը երաշխավորվում է։ Բացառություն են կազմում բարի բարքերին և բարոյականության ճանաչված նորմերին հակասող ծեսերը։

Հոդված 33—1. Անզեն և խաղաղ ժողովների ազատ հրավիրումը, նույն բնույթի ցույցեր և երթեր կազմակերպելը, պետական մարմիններին հանրագրեր ներկայացնելը երաշխավորվում են։

2. Փակ, այդ թվում և հասարակական վայրերում այդպիսի հավաքներ ու ցույցեր կազմակերպելու համար իշխանությունների նախնական համաձայնություն չի պահանջվում։

3. Բաց վայրերում հանրահավաքներ և ցույցեր անցկացնելու համար պահանջվում է իշխանությունների նախնական համաձայնությունը, որոնք, բացառապես հասարակական կարգի ապահովման շարժառիթներով կարող են արգելել դրանք՝ այլ վայր առաջարկելու պայմանով։

4. Երթեր անցկացնելու համար պահանջվում է իշխանությունների նախնական համաձայնությունը. վերջիններս, բացառապես հասարակական կարգի ապահովման շարժառիթներով կարող են արգելել դրանք՝ այլ երթուղի առաջարկելու պայմանով։

5. Պետական բոլոր մարմինները պարտավոր են համապատասխան պաշտոնատար անձանց միջոցով ընդունել հանրագիր ներկայացնող քաղաքացիների ներկայացուցիչներին, լսել նրանց, ընդունել հանրագիրը։ Հանրագրի հիմնավորված պատասխանը պետք է տրվի ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում։

Հոդված 34—1. Քաղաքացիներն իրավունք ունեն առանց հատուկ թույլտվության կազմակերպել տարբեր բնույթի միություններ և ընկերություններ։

2. Արգելվում է այնպիսի կազմակերպություններ ստեղծելը, որոնց նպատակները կամ գործունեությունը հակասում են քրեական օրենքներին կամ ազգամիջյան հարաբերությունների համերաշխությանը։

Հոդված 35—1. Ամուսնությունը և ընտանիքը հասարակության բնական հիմքն են և գտնվում են պետության հատուկ հովանավորության ներքո։

2. Երեխաների խնամքն ու դաստիարակությունը ծնողների բնական իրավունքն ու հասարակական պարտքն են։ Երեխաների արտաամուսնական ծագումը ծնողներին չի զրկում սրանց նկատմամբ իրավունքից և չի ազատում պարտքից։

3. Արտաամուսնական երեխաները և ամուսնությունից ծնված երեխաները իրավահավասար են։ Երեխաների իրավահավասարությունը և դրա իրացումը ապահովվում է օրենքով, պետական և հասարակական ծառայությունների անմիջական հսկողությամբ։

4. Ծնողների անգործունակության դեպքում օրենքն ապահովում է նրանց պարտականությունների փոխանցման և իրացման կարգը։

5. Բազմազավակ ընտանիքները մինչև երեխաների չափահաս դառնալը նպաստ և այլ նյութական օգնություն ստանալու իրավունք ունեն։

6. Նյութական և ֆինանսական օգնություն է տրամադրվում նաև միայնակ մայրերին և միայնակ հայրերին։

7. Երեխաների խնամքից կամ դաստիարակությունից խուսափելու կամ դրանք ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում ծնողները, նրանց փոխարինողները օրենքով սահմանված կարգով և պայմաններում կարող են զրկվել ծնողական կամ ծնողներին փոխարինողի իրավունքներից։

8. Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում երեխաների նյութական կարիքները հոգալու պարտականություններից։

9. Մայրությունը և մանկությունը օգտվում են պետության և հասարակության հատուկ հոգատարությունից։ Հղիության դեպքում տրամադրվում են նախածննդյան և հետծննդյան արձակուրդ, հատուկ բժշկական սպասարկում, ծննդաբերությունից հետո՝ նյութական և ֆինանսական օգնություն և միանվագ նպաստ։ Մինչև երեխայի մեկ տարին լրանալը մոր համար ապահովվում է վճարովի արձակուրդ, իսկ տարին լրանալուց հետո ևս տասներկու ամիս չվարձատրվող արձակուրդ։

Հոդված 36. Յուրաքանչյուր քաղաքացի ունի հանգստի իրավունք։

Այդ իրավունքն ապահովվում է օրենքով սահմանափակվող աշխատանքային օրով, աշխատանքային շաբաթով և ամենամյա լրիվ չափով վարձատրվող արձակուրդով։

Ըստ աշխատանքի բնույթի, տարբեր խմբերի աշխատողների աշխատանքային օրվա և վարձատրվող արձակուրդի տևականությունը սահմանվում է բացառապես օրենքով։

Հոդված 37—1. Պետությունը ճանաչում է ապահովում է քաղաքացիների առողջության պահպանության իրավունքը։

Անձի այդ հիմնական իրավունքը իրացվում է հիվանդության կամ դժբախտ դեպքերում նյութական միջոցներ, համապատասխան բժշկական օգնություն և դեղորայք կամ այլ բժշկական օգնություն անվճար տրամադրելու միջոցով։

2. Պետությունն իր սոցիալական քաղաքականությամբ մշտական հոգատարություն է ցուցաբերում աշխատանքի և կենցաղի պայմանների բարելավման, բժշկական օգնության որակի բարձրացման, առողջապահական հիմնարկների ցանցի ընդլայնման, սոցիալական ապահովագրության հիմնադրամների զարգացման և կատարելագործման ուղղությամբ։

3. Պետությունը օրենքով սահմանված կարգով ու պայմաններում երաշխավորում է մասնավոր կազմակերպությունների և անձանց տարբեր բնույթի վճարովի բուժական հաստատություններ հիմնելու իրավունքը։

Հոդված 38. Պետությունը ճանաչում է երաշխավորում է զառամյալ, ծեր, հիվանդ, աշխատունակությունը լրիվ կամ մասնակիորեն կորցրած քաղաքացիների նյութական ապահովության իրավունքը։

Հոդված 39. Պետությունը և հասարակությունը իրենց անմիջական խնամքի և հոգատարության տակ են վերցնում հարազատներ չունեցող կամ խնամազուրկ ծերերի և անաշխատունակների կյանքի և ապրուստի հոգը։

Հոդված 40—1. Պետությունը և հասարակությունը երաշխավորում են քաղաքացիների կրթության իրավունքը։

Այդ իրավունքը ապահովվում է անվճար և վճարովի դպրոցների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով։

2. Նախնական կրթությունը պարտադիր և անվճար է։ Դրա տևականությունը առնվազն ութ տարի է։

3. Լուսավորության և կրթության գործի կազմակերպման համար պետությունը սահմանում է ընդհանուր նորմեր։

4. Պետությունը կազմակերպում է բոլոր տեսակների և աստիճանների անվճար և վճարովի դպրոցներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ։

5. Պետությունը օրենքով սահմանված կարգով և պայմաններում երաշխավորում է մասնավոր կազմակերպությունների և անձանց վճարովի դպրոցներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ հիմնելու իրավունքը։

6. Միջնակարգ մասնագիտական դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներին ըստ մասնագիտության աշխատանքի թույլատրելու համար պետական և մասնավոր բոլոր ուսումնական հաստատություններում սահմանվում են պետական քննություններ, որոնք անցկացվում են համապատասխան բարձրորակ մասնագետներից կազմված պետական քննական հանձնաժողովների կողմից։

7. Առավել ընդունակ աշակերտների համար բոլոր տեսակի պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը անվճար է։

Այդ իրավունքն ապահովում է բարձրագույն ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր տարի սահմանվող սովորողների որոշակի քանակին համապատասխան, մրցութային քննությունների հիման վրա։

Բարձր առաջադիմություն ցուցաբերող և արժանի կարիքավոր սովորողներին մանկավարժական անձնակազմի որոշմամբ տրվում են կրթաթոշակ և նյութական օգնության այլ միջոցներ։

Հոդված 41—1. Անձի սոցիալական իրավունքները երաշխավորվում են պետության կողմից ստեղծվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական իրավունքների ապահովագրության պետական հիմնադրամի և ճյուղային բոլոր արհմիությունների կողմից ստեղծվող ճյուղային արհմիությունների սոցիալական ապահովագրության հիմնադրամների միջոցով։

2. Քաղաքացիների սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը ստեղծվում է պետական բյուջեի եկամուտներից՝ յուրաքանչյուր տարի կատարվող հատկացումների հաշվին, այդ հիմնադրամի տնտեսական գործունեությամբ ստացվող եկամուտներից և տարբեր կազմակերպությունների ու անձանց միանվագ հատկացումներից։

3. Ճյուղային արհեստակցական միությունների սոցիալական ապահովագրության հիմնադրամները ստեղծվում են արհմիությունների եկամուտների հաշվին, այդ հիմնադրամների տնտեսական գործունեությամբ ստացված եկամուտներից և տարբեր կազմակերպությունների ու անձանց միանվագ հատկացումներից։

4. Պետությունը հարկային քաղաքականության և այլ միջոցներով նպաստում է սոցիալական ապահովագրության հիմնադրամների տնտեսական գործունեության համակողմանի ծավալմանն ու զարգացմանը։

5. Անձի սոցիալական իրավունքների իրականացման, սոցիալական ապահովագրության հիմնադրամների կազմակերպման ու գործունեության մանրամասն կարգը, դրանց իրավական վիճակը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական ապահովագրության օրենսգիրքը։

Հոդված 42—1. Սեփականության բոլոր ձևերը իրավահավասար են և անձեռնմխելի։ Դրանց ձևերը, բովանդակությունն ու սահմանները որոշում է օրենքը։

2. Սեփականության իրավունքից օգտվելը ենթակա է հասարակության ընդհանուր շահերին և կարգավորվում է օրենքով։

3. Ոչ ոք չի կարող սեփականազրկվել այլ կերպ, քան հասարակական անհրաժեշտության կամ հասարակական ընդհանուր օգտի՝ բացառապես օրենքով նախատեսված դեպքերից։

4. Սեփականազրկում կարող է կատարվել միայն նախապես պետական միջոցների հաշվին արդարացի փոխհատուցում տրամադրելու պայմանով։ Փոխհատուցման չափերի վերաբերյալ վեճերը կարգավորվում են ընդհանուր դատական կարգով։

Հոդված 43. Պետությունը ճանաչում է մտավոր և հոգևոր ստեղծագործության արդյունքների սեփականության իրավունքը։

Հոդված 44. Պետությունը երաշխավորում է ժառանգության իրավունքը։ Այդ իրավունքի բովանդակությունն ու սահմանները, ըստ օրենքի և ըստ կապակի ժառանգման կարգն ու կանոնները, ժառանգվող գույքի նկատմամբ պետության իրավունքները սահմանում է օրենքը։

Հոդված 45. Հայաստանի Հանրապետության և ոչ մի քաղաքացի չի կարող հանձնվել այլ պետության։

Հոդված 46. Ցուրաքանչյուր ոք պետական մարմինների կողմից իր իրավունքների խախտման դեպքում դատական պաշտպանության իրավունք ունի։ Եթե օրենսդրությունն այլ ընդդատություն չի սահմանում, ապա, ըստ հայցվորի ցանկության, այդպիսի վեճերը պարտավոր է իր վարույթին վերցնել ցանկացած աստիճանի դատարան։

Հոդված 47. Անձը իր հիմնական իրավունքներից և ազատություններից կարող է զրկվել կամ զրանցում սահմանափակվել միայն Սահմանադրական դատարանի որոշմամբ, բացառապես օրենքով նախատեսված կարգով և դեպքերում, օրենքով ամրագրված սահմաններում։

Հոդված 48. Ազատության և ալգային ազատագրության համար պայքարող, այդ դաղափարների համար հետապնդվող անձինք Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են ապաստանի իրավունքից։

Հոդված 49—1. Հայրենիքի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, աշխարհասփյուռ բոլոր հայերի սրբազան պարտականությունն ու նվիրական գործն է։

2. Զինվորական ծառայությունը պարտադիր է։ Այն իրականացվում է բացառապես օրենքով սահմանված կարգով և ժամկետներում։

3. Պետությունը երաշխավորում է խաղաղ պայմաններում ծառայող երիտասարդության՝ ուսանելու տարիների ընթացքում զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը և օրենքով նախատեսված կարգով ապահովում նրա ռազմական պատրաստականությունը։

Հոդված 50—1. Քաղաքացիները պարտավոր են իրենց եկամուտներին համապատասխան աճող համաչափությամբ մասնակցել պետության ծախսերին։

2. Հարկային համակարգը, հարկերի գանձման կարգն ու ժամկետները սահմանվում են բացառապես օրենքով, միայն օրենքով է որոշվում նաև հարկեր վճարելուց խուսափողների, եկամուտների չափերը թաքցնող անձանց և կազմակերպությունների պատասխանատվության հարցը։

3. Նոր հարկեր կարող են սահմանվել և գանձման դրույքները կարող են ավելացվել բացառապես հանրապետության պետական բյուջեն հաստատելու հետ միաժամանակ։

Գլուխ 2

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 51—1. Հայ ազգը, ստեղծելով սույն Սահմանադրությամբ ամրագրված օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, դրանք պատշաճ լիազորություններով օժտելով հանդերձ, բացառապես իրեն է վերապահում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, նրա օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների կազմակերպմանը վերաբերող առավել կարևոր հարցերի լուծումը՝

ա) հանրապետության Սահմանադրության հաստատումը, դրա փոփոխությունների մասին որոշումներ հաստատելը,

բ) հանրապետության տարածքի փոփոխությունների մասին որոշումներ ընդունելը,

գ) այլ պետությունների կամ պետության հետ դաշնակցային կամ համադաշնակցային կապեր հաստատելը կամ այդպիսի կապերը դադարեցնելու մասին որոշումներ հաստատելը, կամ այդպիսի պայմանագրեր կնքելու համար լիազորելը,

դ) այն միջազգային պայմանագրերի կամ համաձայնագրերի վավերացումը կամ դրանք կնքելու համար լիազորելը, որոնք ուղեկցվում են հանրապետության տարածքում օտարերկրյա զինված ուժերի տեղաբաշխումով. կամ դրանց պատճանող ռազմական հենակետեր ու սարքավորումներ տեղադրելով,

ե) Համազգային ժողովի կազմավորումը,

զ) Սահմանադրական դատարանի կազմավորումը։

2. Ազգի գերագույն, անմիջական պետական կամքին վերապահված հարցերը լուծվում են բացառապես հանրաքվեի, հարցման և ընտրությունների միջոցով։

3. Անմիջական ժողովրդավարությանը վերապահված հարցերի առթիվ որևէ այլ կերպ որոշումներ ընդունելը ծանրագույն պետական հանցագործություն է և պատժվում է օրենքի ողջ խստությամբ։

Հոդված 52—1. Սահմանադրության 51 հոդվածի 1-ին մասի «ա», «դ», «զ» կետերով անմիջական ժողովրդավարության բացառիկ իրավասությանը պատկանող հարցերի նախապատրաստման ընթացքում Համազգային ժողովի, հանրապետության նախագահի, կառավարության միևնույն տարաձայնություններ առաջանալու դեպքերում հարցը լուծվում է համազգային հարցման միջոցով։

2. Հարցման արդյունքները միաժամանակ ժողովրդի վստահության և ժողովրդի անվստահության քվե են։

3. Եթե հարցման արդյունքներով ժողովրդի կամքը համապատասխանում է պետության այս կամ այն բարձրագույն մարմնի, մարմինների դիրքորոշմանը, ապա հարցումը միաժամանակ ժողովրդի վստահության քվե է այդ մարմնին կամ մարմիններին։

4. Եթե հարցման արդյունքներով ժողովրդի կամքը չի համապատասխանում բարձրագույն պետական մարմիններից որևէ մեկի կամ դրանցից երկուսի դիրքորոշմանը, ապա հարցումը միաժամանակ ժողովրդի անվստահության քվե է այդ բարձրագույն պետական մարմնին կամ մարմիններին։

5. ա) Ժողովրդի անվստահության քվե ստացած Համազգային ժողովը հարցման արդյունքների հրապարակման պահից համարվում է վաղակետ արձակված։

բ) Ժողովրդի անվստահության քվե ստացած հանրապետության նախագահը հարցման արդյունքների հրապարակման պահից համարվում է պաշտոնազրկված։

գ) Ժողովրդի անվստահության քվե ստացած կառավարության կազմի լիազորությունները հարցման արդյունքների հրապարակման պահից համարվում են դադարեցված։

Հոդված 53—1. Համազգային հանրաքվեն, համազգային հարցումը, համազգային ընտրությունները, համազգային հանրագիրը Սահմանադրությամբ և օրդանական օրենքներով նախատեսված կարգով կազմակերպում, նախապատրաստում, անցկացնում և վերահսկում են Անմիջական ժողովրդավարության համազգային հանձնախումբը և Սահմանադրական դատարանը։

2. Համազգային հանրաքվեն, համազգային հարցումը և համազգային հանրագիրը կազմակերպվում և անցկացվում են բացառապես ըստ «Համազգային հանրաքվեի, հարցման, հանրագրի մասին» օրգանական օրենքի։

Հոդված 54. Անմիջական ժողովրդավարության համազգային հանձնախումբը մշտապես գործող կազմակերպական օժանդակ մարմին է։ Նրա գործունեությունը սահմանափակվում է բացառապես անմիջական ժողովրդավարության միջոցները Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված դեպքերում ու կարգով գործարկելու, դրանց արդյունքների իրականացումը կազմակերպորեն ապահովելու ֆունկցիաներով։

Հոդված 55—1. Անմիջական ժողովրդավարության համազգային հանձնախումբը ընտրվում է հանրապետության քաղաքացիների կողմից համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի ազատ իրականացման հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, Համազգային ժողովում ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիներից։

2. Համազգային հանձնախումբը ընտրվում է նոր գումարման Համազգային ժողովի կազմի ընտրությունների հետ միաժամանակ, առանձին ցուցակով։

3. Համազգային հանձնախմբի լիազորությունները շարունակվում են մինչև նոր գումարման Համազգային ժողովի կողմից իր պատգամավորների լիազորությունները հաստատելը։

4. Համազգային հանձնախմբի նոր կազմի ընտրությունների օրինականությունը վավերացնում է Սահմանադրական դատարանը՝ Համազգային հանձնախմբի նախորդ կազմի ներկայացրած տվյալների հիման վրա, նոր գումարման Համազգային ժողովի կողմից իր պատգամավորների լիազորությունների հաստատման հաջորդ օրը։

Հոդված 56—1. Համազգային ժողովը, նրա նախագահությունը, Հանրապետության նախագահը, Սահմանադրական դատարանը, նախարարների խորհուրդն ապահովում են Անմիջական ժողովրդավարության համազգային հանձնախմբի կանոնավոր և անխափան աշխատանքը։

2. Տեղական ինքնավարության մարմինները պարտավոր են աջակցել Համազգային հանձնախմբին, ապահովել Անմիջական ժողովրդավարության տեղական հանձնախմբերի կանոնավոր և անխափան աշխատանքը։

Հոդված 57—1. Անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախումբը իր գործունեության համար պատասխանատվություն չի կրում և հաշվետու չէ պետության մարմին-

ներին։ Համազգային հանձնախմբի անդամները կարող են պատասխանատվության ենթարկվել Հանրապետության գլխավոր դատախազի կողմից ներկայացված մեղադրանքի հիման վրա, Սահմանադրական դատարանի կազմի առնվազն Երկու երրորդի համաձայնությամբ կայացած որոշումով։

2. Համազգային հանձնախմբի ընտրությունների կարգը, նրա կազմի և իրավասության հարցերը կարգավորում է «Հայաստանի Հանրապետությունում Անմիջական ժողովրդավարության Համազգային և տեղական հանձնախմբերի մասին» օրենքով։

Հոդված 58—1. 200 հազար ընտրողների ստորագրած հանրադրի հիման վրա, անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի ներկայացմամբ, Հանրապետության նախագահը հրովարտակով համազգային հարցում է նշանակում հայ ազգի և Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող ցանկացած հարցի վերաբերյալ։

2. Նույն թվով ընտրողների ստորագրած հանրադրի հիման վրա Անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի ներկայացմամբ, Հանրապետության նախագահը հրովարտակով համազգային հարցում է նշանակում Համազգային ժողովին վստահություն հայտնելու հարցը որոշելու մասին։

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմաններով և կարգով Համազգային ժողովը համազգային հարցում է նշանակում Հանրապետության նախագահին վստահություն հայտնելու, իսկ Հանրապետության նախագահը՝ կառավարությանը վստահություն հայտնելու մասին։

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հարցերի վերաբերյալ համազգային հարցումները նշանակվում են հանրագիր ներկայացնելու պահից առնվազն 30, բայց ոչ ավելի, քան 45 օրվա ընթացքում։

Գլուխ 3

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Հոդված 59. Հայաստանի Հանրապետության խորհրդարանը ազգը ներկայացնող միապալատ Համազգային ժողովն է։ Օրենսդրական իշխանությունը բացառապես պատկանում է Համազգային ժողովին և ազգին։

Ազգն իր գերագույն օրենսդիր կամքն արտահայտում է համազգային հանրաքվեի միջոցով օրենքներ ընդունելու ձևով, օրգանական օրենքով սահմանված կարգով։

Համազգային ժողովը օրենսդրական իշխանությունն իրականացնում է օրգանական օրենքներ և օրենքներ ընդունելու միջոցով։

Հոդված 60—1. Համազգային ժողովը կազմված է 120 պատգամավորից։ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող պատգամավորներն ընտրվում են հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ միասնական ընտրատարածքից։

2. Հանրապետությունից ընտրվող պատգամավորների 50 տոկոսը ընտրվում է համամասնական ընտրական համակարգի հիման վրա, ըստ կուսակցությունների առաջադրած ցուցակների, մյուս 50 տոկոսը՝ հարաբերական մեծամասնության մաժորիտար ընտրական համակարգի հիման վրա, ըստ անհատապես առաջադրված թեկնածուների քվեաթերթերի։

3. Պատգամավորների ընտրության հետ միաժամանակ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված կարգով ընտրվում են նաև Համազգային ժողովի կազմի մեկ քառորդին համապատասխան թվով պատգամավորության թեկնածուներ։

4. Պատգամավորների ընտրություններն անցկացվում են համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի ազատ իրականացման հիման վրա, գաղտնի քվեարկությամբ։

5. Ընտրելու իրավունք ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության 21 տարին լրացրած քաղաքացիները, անկախ իրենց մշտական բնակության վայրից, և նույն տարիքը լրացրած արտերկրի հայ համայնքներին պատկանող անձինք։

Նույն հիմունքներով, ընտրվելու իրավունք ձեռք են բերում 25 տարին լրացրած անձինք։

6. Համազգային ժողովի ընտրությունների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև արտերկրի հայ համայնքներից ընտրվող պատգամավորների թիվը և ընտրելու կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը»։

Հոդված 61. Համազգային ժողովի պատգամավորը ներկայացնում է ազգի հավաքական կամքը։ Նրա մանդատն անկախ է որևէ պատվիրանից կամ հանձնարարականից։

Հոդված 62—1. Համազգային ժողովի ընտրաշրջանի ժամկետը 4 տարի է։ Պատերազմի կամ Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող այլ արտակարգ պայմաններում

Հանրապետության նախագահի կամ կառավարության առաջարկության հիման վրա Համազգային ժողովը որոշում է ընդունում իր լիազորությունների ժամկետը երկարացնելու մասին։

2. Համազգային ժողովի ընտրաշրջանի սկիզբը սկսվում է նրա նոր գումարման առաջին նստաշրջանում պատգամավորների լիազորությունները հաստատելու օրից։

3. Մինչև նոր գումարման Համազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը Համազգային ժողովի նախկին կազմը պահպանում է իր լիազորությունները։

Հոդված 63—1. Համազգային ժողովի ընտրությունները նշանակվում են նրա ընտրաշրջանը լրանալուց առնվազն 60 օր առաջ։ Ընտրություններն անցկացվում են Համազգային ժողովի ընտրաշրջանի ժամկետը լրանալուն հաջորդող առաջին կիրակի օրը։

2. Համազգային ժողովի վաղակետ արձակման դեպքում նոր ընտրությունները նշանակվում են միաժամանակ և անցկացվում են հաջորդ ամսվա վերջին կիրակի օրը։

3. Նորընտիր Համազգային ժողովի առաջին նստաշրջանը բացվում է ոչ ուշ, քան ընտրությունների ավարտի 30-րդ օրը, իսկ վաղակետ արձակմանը հաջորդած ընտրություններից հետո՝ ոչ ուշ, քան 20-րդ օրը։

4. Նոր գումարման Համազգային ժողովը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետներում առաջին նստաշրջանի է հրավիրվում Հանրապետության նախագահի հրովարտակով կամ վարչապետի հրամանագրով։ Այդ ժամկետների ընթացքում նստաշրջան չհրավիրելու դեպքում Համազգային ժողովը նստաշրջանի է հավաքվում սեփական իրավունքով, ընտրությունների մեկ ամսին հաջորդած առաջին երեքշաբթի օրը, իսկ Համազգային ժողովի վաղակետ արձակմանը հաջորդած ընտրություններից հետո՝ ընտրությունների 20-րդ օրվան հաջորդած առաջին աշխատանքային օրը։

Հոդված 64—1. Նոր գումարման Համազգային ժողովի անդրանիկ նիստը մինչև Համազգային ժողովի նախագահի ընտրությունները վարում է անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի նախագահը։

2. Համազգային ժողովն ինքն է որոշում իր պատգամավորների ընտրությունների օրինականությունը՝ իր կազմած մանդատային հանձնաժողովի զեկուցման հիման վրա։

3. Համազգային ժողովը էթիկայի հանձնաժողովի որոշման հիման վրա ինքն է լուծում նաև իր անդամների վարքագծի՝ մանդատին անհամատեղելիության հարցը։ Օրենքի ուժով ընդունված «Համազգային ժողովի աշխատակարգը» սահմանում է այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում Համազգային ժողովը որոշում է ընդունում իր անդամների լիազորությունները վաղակետ դադարեցնելու մասին։

Հոդված 65. Համազգային ժողովը իր մանդատների թափուր մնալու դեպքում, մանդատային հանձնաժողովի զեկուցման հիման վրա, թափուր մնացած տեղին համապատասխան, ըստ կուսակցական կամ անհատապես քվեարկված պատգամավորության ցուցակների հաջորդականության, պատգամավորների լիազորությունները փոխանցում է պատգամավորության թեկնածուներին։

Հոդված 66—1. Համազգային ժողովը նստաշրջանի է հավաքվում սեփական իրավունքով՝ փետրվար և սեպտեմբեր ամիսների առաջին երեքշաբթի օրը։ Համազգային ժողովի նախագահը պարտավոր է նստաշրջան հրավիրել նաև Հանրապետության նախագահի, վարչապետի կամ իր անդամների մեկ երրորդի պահանջով։

2. Համազգային ժողովը սեփական իրավունքով նստաշրջանի է հավաքվում նաև հանրապետությունում պատերազմական վիճակ կամ նրա ողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարելու դեպքում։ Հանրապետության ողջ տարածքում արտակարգ դրության պայմաններում Համազգային ժողովի նստաշրջանը շարունակվում է մինչև նրա ավարտը։

3. Եթե նստաշրջանի տևականությունը գերազանցում է 4 ամիսը, ապա Հանրապետության նախագահի հրովարտակով այն կարող է ավարտված համարվել։ Այդ չորսամսյա ժամկետի մեջ չեն մտնում նստաշրջանների ընդմիջումները։ Նստաշրջանի ընդմիջում է համարվում հաջորդական նիստերի միջև ընկած՝ 10 օրից ավելի ժամանակաշրջանը։

Հոդված 67—1. Համազգային ժողովը իր անդամներից ձայների մեծամասնությամբ ընտրում է Համազգային ժողովի նախագահ, նախագահի երկու տեղակալներ և քարտուղար։

2. Համազգային ժողովը բացարձակ մեծամասնությամբ ընտրում է մշտական հանձնաժողովներ և դրանց նախագահներ։

3. Համազգային ժողովի նախագահը, նրա երկու տեղակալները և քարտուղարը մշտական հանձնաժողովների նախագահների հետ միասին կազմում են Համազգային ժողովի նախագահություն։

4. Համազգային ժողովի նախագահը այն շենքում, ուր անցկացվում է նիստը, օժտված է կարգապահական և ոստիկանական իշխանությամբ։ Նա կարող է նիստից դուրս հրավիրել աշխատակարգը խախտող, նիստի ընթացքը խանգարող պատգամավորներին, գազարևցնել նրանց։ Ելույթները։

Առանց Համազգային ժողովի նախագահի թույլտվության նիստի շենքում խուզարկություն կամ ձերբակալություն չի կարող կատարվել։

5. Համազգային ժողովի նախագահը, նախագահության անդամներից յուրաքանչյուրը պատգամավորների մեկ երրորդի պահանջով և քվեարկությամբ Համազգային ժողովի բացարձակ մեծամասնության համաձայնությամբ կարող են հետ կանչվել նախագահության կազմից։

Հոդված 68—1. Համազգային ժողովի նիստերը հրապարակային են։ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի հիմնավորված պահանջով, պատգամավորների մեծամասնությամբ կայացրած որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ։ Այդ առթիվ որոշումն ընդունվում է դռնփակ նիստում։

2. Ազգային ժողովը որոշումներ է ընդունում իր անդամների պարզ մեծամասնության ներկայությամբ, նիստին ներկա պատգամավորների մեծամասնության համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումներ ընդունելու համար պահանջվում է պատգամավորների կազմի որակյալ մեծամասնության համաձայնությունը։

3. Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին որոշումը, օրգանական օրենքներ և օրենագրքեր ընդունելու մասին որոշումներն ընդունվում են Համազգային ժողովի որակյալ մեծամասնության համաձայնությամբ։

4. Համազգային ժողովի ներքին կյանքին, նրա մարմինների կազմավորմանը, աշխատանքներին վերաբերող որոշումներ ընդունելու համար Համազգային ժողովի աշխատակարգը կարող է սահմանել այլ կարգ։

Հոդված 69. Պատգամավորների քվեարկությունն անձնական է և բաց։ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, կուսակցական ու պատգամավորական խմբերից կամ մշտական հանձնաժողովներից մեկի առաջարկությամբ, պատգամավորների մեծամասնության համաձայնությամբ, կարող է անցկացվել անվանական կամ գաղտնի քվեարկություն։

Հոդված 70—1. Կառավարության անդամները Համազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերին մասնակցելու և առաջին իսկ պահանջով արտահերթ ձայն ստանալու իրավունք ունեն։ Այդ նիստերին կարող են մասնակցել նաև կառավարության անդամների լիազորած պաշտոնատար անձինք։

2. Համազգային ժողովի, նրա հանձնաժողովների պահանջով կառավարության անդամները պարտավոր են մասնակցել նրանց նիստերին։

Հոդված 71 —1. Համազգային ժողովը ստեղծում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ։ Մշտական հանձնաժողովների քանակը և տեսակները որոշվում են Համազգային ժողովի աշխատակարգով։

Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են որոշակի հարց ուսումնասիրելու և այդ առթիվ Համազգային ժողովին հաշվետվություն ներկայացնելու համար։

Որոշակի գործի քննության համար կարող է ստեղծվել հետաքննող հանձնաժողով, որի լիազորությունների և գործունեության կարգը որոշվում է Համազգային ժողովի աշխատակարգով։

2. Մշտական հանձնաժողովների որոշումները կրում են բացառապես երաշխավորական բնույթ։

Հոդված 72—1. Համազգային ժողովի անդամները չեն կարող հետապնդվել իրենց գործառության ընթացքում Համազգային ժողովում կամ նրա մարմիններում իրենց կարծիքը հայտնելու կամ քվեարկելու համար։

2. Առանց Համազգային ժողովի, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում նրա նախագահության համաձայնության, Համազգային ժողովի անդամը չի կարող կալանվել կամ որևէ այլ կերպ զրկվել անձնական ազատությունից, ենթարկվել անձնական կամ բնակարանային խուզարկության, բացառությամբ բացահայտ և ծանր հանցագործություն կատարելու կամ հանցանքի վայրում բռնվելու դեպքերի, երբ կալանելու մասին կարգադրություն անելը պարտադիր է։

Համազգային ժողովի անդամին կալանելու դեպքում այդ մասին անհապաղ տեղյակ է պահվում Համազգային ժողովին կամ նրա նախագահությանը։

3. Համազգային ժողովի և իրավապահ մարմնի միջև պատգամավորին կալանելու կամ նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու վերաբերյալ անհամաձայնություն առաջանալու դեպքում ղեկավոր դատախազի ներկայացմամբ հարցը լուծում է Սահմանադրական դատարանը։

Հոդված 73. Համազգային ժողովը ընդունում է իր աշխատակարգը։

Հոդված 74. Համազգային ժողովի պատգամավորների վարձատրությունը իրականացվում է օրենքով սահմանված կարգով։

Հոդված 75—1. Օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է Նախարարների խորհրդին, Համազգային ժողովի մշտական հանձնաժողովներին, կուսակցական ու պատգամավորական խմբերին և Համազգային ժողովի ցանկացած անդամի։

2. Օրենսդրական նախաձեռնությունն իրագործվում է նաև ժողովրդական նախաձեռնությամբ, ընտրողների ստորագրությամբ, օրինագիծ ներկայացնելու միջոցով։

3. Ժողովրդական նախաձեռնությունը կիրառվում է նաև անհատապես։

Հանրային կարիքները օրենսդրական միջամտությամբ բավարարելու պահանջով Համազգային ժողովին կարող է դիմել Հանրապետության ցանկացած քաղաքացի։

Հոդված 76. Օրինագիծը ներկայացվում է Համազգային ժողովի նախագահությանը և եռօրյա ժամկետի ընթացքում ուղարկվում համապատասխան հանձնաժողովին կամ հանձնաժողովներին։ Այդ նույն ժամկետում կառավարությանն են ուղարկվում ոչ կառավարական օրինագծերը, օրենսդրական միջամտությամբ հանրային կարիքները բավարարելու պահանջները։

Հոդված 77. Առանց կառավարության նախնական համաձայնության չեն կարող քննարկվել այն օրինագծերը և որոշումների նախագծերը, որոնց կիրառման դեպքում կգերազանցվեն պետական բյուջեով նախատեսված ծախսերը։

Հոդված 78—1. Օրինագիծն ընդունվում է երկու ընթերցմամբ։ Առաջին ընթերցման ընթացքում քննարկվում են օրինագծի գաղափարը, նրա նպատակը և խնդիրները, օրինագծի հիմնական սկզբունքները։

Երկրորդ ընթերցումը ընդգրկում է օրինագծի՝ ըստ առանձին հոդվածների քննարկումը և ընդունումը, օրինագիծը ամբողջությամբ ընդունելու համար քվեարկությունը։

2. Օրինագծի առաջին և երկրորդ ընթերցման միջև ընկած ժամանակաշրջանը 30 օրից ավելի չի կարող լինել։

3. Օրինագիծն ամբողջությամբ կարող է ընդունվել կամ մերժվել նաև առաջին ընթերցմամբ։ Այդ մասին որոշում ընդունելուն հաջորդում է օրինագիծն ամբողջությամբ քվեարկության դնելը։

Հոդված 79. Օրինագիծ ներկայացնելու և առաջին ընթերցմամբ քննարկելու միջև ընկած ժամկետը 20 օրից ավելի չի կարող լինել։ Եթե օրինագիծը ներկայացվում է նստաշրջանի ավարտին, այդ ժամկետից պակաս մնացած ժամանակամիջոցում, ապա քննարկումը կարող է կատարվել հաջորդ նստաշրջանի առաջին 20 օրվա ընթացքում։

Հոդված 80—1. Կառավարության կողմից օրինագիծը անհետաձգելի հայտարարվելու դեպքում այն քննարկվում է 10 օրվա ընթացքում։ Նյութական զգալի ծախսերի հետ կապված օրենսդրական նախաձեռնությունը անհետաձգելի չի կարող հայտարարվել։

2. Անհետաձգելի հայտարարված օրինագծերի քննարկման վարույթը սահմանվում է Համազգային ժողովի աշխատակարգով։

Հոդված 81. Օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից և միևնույն հարցի կարգավորմանն ուղղված օրինագծի տարբերակներ ներկայացվելու դեպքում Համազգային ժողովի նախագահությունը այդ նախագծերի հեղինակներից համամասնության սկզբունքով ստեղծում է համաձայնեցնող հանձնաժողով, որը մշտական հանձնաժողովներում այդ օրինագծերը քննարկելու շրջանակներում մշակում է համաձայնեցված միասնական օրինագիծ։ Համաձայնություն չկայացվելու դեպքում բոլոր տարբերակները իրենց վերջնական տեքստով, հանձնաժողովի կամ հանձնաժողովների եզրակացության հետ միասին առաջին ընթերցմամբ քննարկելու համար ներկայացվում են Համազգային ժողովին։ Քվեարկությամբ առավել շատ ձայներ ստացած տարբերակը երկրորդ ընթերցմամբ քննարկման նախապատրաստելու համար վերադարձվում է հանձնաժողովին։

Հոդված 82—1. Կառավարական օրինագիծը պահանջվող ձայների քանակ չստանալու դեպքում վարչապետը կարող է Համազգային ժողովից վստահության քվե պահանջել։ Վարչա-

պետի պահանջը քվեարկության է դրվում այն ներկայացնելու եռօրյա ժամկետում կամ այդ ժամկետը լրանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը։

2. Վարչապետին վստահություն հայտնելու դեպքում օրինագիծը առանց նոր քվեարկության համարվում է ընդունված՝ կառավարության առաջարկած տեքստով կամ նախքան վստահության գնելը՝ հանձնաժողովների հետ համաձայնեցված տեքստով։

Վարչապետին անվստահություն է հայտնվում ձայների բացարձակ մեծամասնությամբ։ Անվստահություն հայտնելու հետ միաժամանակ Համազգային ժողովը ձայների նույնպիսի մեծամասնությամբ նշանակում է նոր վարչապետ. հակառակ դեպքում Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ 10 օրվա ընթացքում արձակում է Համազգային ժողովը և միաժամանակ նշանակում խորհրդարանական նոր ընտրություններ։

Հոդված 83. Վարչապետը չի կարող միևնույն նստաշրջանի ընթացքում կառավարական օրինագիծը մերժելու առիթով երկու անգամից ավելի վստահության քվե պահանջել։

Հոդված 84—1. Օրենքները հրապարակվում են Հանրապետության նախագահի ստորագրությամբ, վարչապետի նախնական համաձայնությամբ, 10 օրվա ընթացքում։ Համազգային ժողովի կամ վարչապետի կողմից անհետաձգելի հայտարարված օրենքը հրապարակվում է 48 ժամվա ընթացքում։ Այդ ժամանակամիջոցում Հանրապետության նախագահը իր սեփական կամ վարչապետի առարկություններով օրինագիծը կարող է վերադարձնել Համազգային ժողովի նոր քննարկմանը։ Նախագահական արգելանքը կարող է հաղթահարվել Համազգային ժողովի բացարձակ մեծամասնությամբ։

2. Օրենքները գործողության մեջ են դրվում հրապարակման պահից 10-րդ օրը, եթե այդ մասին դրանք այլ ցուցում չեն պարունակում։

3. Օրենքները տվյալ տարվա հաջորդական թվարկությամբ հրապարակվում են. Համազգային ժողովի պաշտոնական տեղեկագրերում և մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներով տեղյակ պահվում ազգաբնակչությանը։

Հոդված 85. Համազգային ժողովը Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումներ կարող է ընդունել իր անդամների որակյալ մեծամասնության և կառավարության առաջարկությամբ կամ ժողովրդական նախաձեռնությամբ առնվազն 100 հազար ընտրողների ստորագրությամբ օրինագիծ ներկայացնելու միջոցով։

Հոդված 86—1. Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը չի կարող վերաբերել Սահմանադրության 1—15 հոդվածներում ամրագրված հիմնարար դրույթներին, նրա առաջին ղլխում ամփոփված իրավունքների վերացմանը կամ սահմանափակմանը, 51 հոդվածի առաջին մասում ամրագրված անմիջական ժողովրդավարության առանձնաշնորհների վերացմանը կամ սահմանափակմանը կամ դրանց որևէ ձևով օտարմանը պետական մարմինների կողմից։

2. Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը չի կարող վերացնել կամ որևէ փոփոխության ենթարկել Սահմանադրության սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամփոփված նորմերը։

Հոդված 87. Համազգային ժողովի նախագահությունը Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը եռօրյա ժամկետի ընթացքում ուղարկում է Սահմանադրական դատարանին, մշտական հանձնաժողովներին, իսկ Համազգային ժողովի պատգամավորների կամ ժողովրդական նախաձեռնությամբ ներկայացված առաջարկությունը՝ նաև Հանրապետության նախագահին և կառավարությանը։

Հոդված 88—1. Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը ստանալուց առնվազն 45, բայց ոչ ուշ, քան 65 օրվա ընթացքում այն ներկայացնում է Համազգային ժողովի նախագահությանը, Հանրապետության նախագահին և կառավարությանը, իսկ ժողովրդական նախաձեռնությամբ ներկայացված առաջարկությունը՝ նաև անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբին՝ տալով իր հիմնավորված եզրակացությունը առաջարկվող փոփոխության սահմանադրականության մասին։

2. Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը Սահմանադրության 86 հոդվածում ամրագրված դրույթներին չհամապատասխանելու դեպքում հայտարարում է հակասահմանադրական։ Դրա հետագա քննարկման ընթացքը դադարեցվում է։

Հոդված 89. Համազգային ժողովի նախագահությունը Սահմանադրության փոփոխությանը վերաբերող առաջարկի օրինականությունը վավերացնող Սահմանադրական դատարանի եզրակացությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում՝ պաշտոնական մամուլի միջոցով՝ ապահովում է դրա ամբողջական տեքստի հրապարակումը։

Հոդված 90—1. Համազգային ժողովը Սահմանադրության փոփոխության մասին որոշում է ընդունում առնվազն 10 ամսվա, բայց ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում, երկու կամ երեք ընթերցմամբ։

2. Առաջին ընթերցմամբ քննարկումն անցկացվում է փոփոխության առաջարկության օրինական լինելու մասին Սահմանադրական դատարանի եզրակացությունը ստանալուց առնվազն 90, բայց ոչ ավելի, քան 120 օր հետո։

3. Առաջին և երկրորդ ընթերցումների միջև ընկած ժամանակաշրջանը առնվազն յոթ ամիս է, բայց ոչ ավելի, քան ութ ամիս։

4. Երկրորդ ընթերցմամբ անցկացված քվեարկությամբ Համազգային ժողովի որակյալ մեծամասնության հավանությունը ստանալու դեպքում Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը համարվում է ընդունված։

5. Այդպիսի համաձայնություն չստանալու դեպքում առնվազն 30, բայց ոչ ավելի, քան 50 օր հետո անցկացվում է առաջարկության երրորդ ընթերցմամբ քննարկումը։

Երրորդ ընթերցմամբ Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկում Համազգային ժողովի բացարձակ մեծամասնությունը։

6. Եթե Սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունը ներկայացրել են Հանրապետության նախագահը և կառավարությունը, ապա առաջարկությունը չընդունվելու դեպքում Համազգային ժողովը 98 ժամ անց, բացարձակ մեծամասնությամբ անվստահություն է հայտնում կառավարությանը։

7. Այդպիսի մեծամասնություն չկայանալու դեպքում վարչապետի առաջարկությամբ Հանրապետության նախագահը արձակում է Համազգային ժողովը և նշանակում խորհրդարանական նոր ընտրություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանադրական փոփոխությունը վերաբերում է Համազգային ժողովի իրավասության սահմանափակմանը։

8. Եթե Համազգային ժողովը մերժում է իր իրավասությունը սահմանափակող սահմանադրական փոփոխությունը, ապա վարչապետի նախաձեռնությամբ, Հանրապետության նախագահի հրովարտակով առաջարկությունը կարող է դրվել հանրաքվեի։ Եթե հանրաքվեի արդյունքներով առաջարկված սահմանադրական փոփոխությունն ընդունվում է, ապա դրա միանշանակ հետևանքը Համազգային ժողովի վաղաժամ արձակումն է, իսկ սահմանադրական փոփոխությունը մերժելու հետևանքը՝ վարչապետի պաշտոնազրկումն ու կառավարության կազմի հրաժարականը։

Հոդված 91. Համազգային ժողովում սահմանադրության փոփոխության մասին առաջարկությունն ընդունվելու դեպքում նրա ամբողջական տեքստը եռօրյա ժամկետում ուղարկվում է անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբին՝ համաժողովրդական քվեարկությամբ հաստատելու համար։

Հոդված 92—1. Համազգային ժողովը վավերացնում է քաղաքական բնույթի ցանկացած միջազգային պայմանագիր։

2. Համազգային ժողովը պատգամավորների բացարձակ մեծամասնության պահանջով կամ վարչապետի առաջարկությամբ վավերացնում է նաև ցանկացած այլ միջազգային պայմանագիր կամ համաձայնագիր։

3. Համազգային ժողովը միջազգային պայմանագրերը վավերացնում է օրենսդրական կարգով։

Հոդված 93—1. Համազգային ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ սահմանադրության 51 հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված բնույթի միջազգային պայմանագիր կնքելու լիազորություն է տալիս Հանրապետության նախագահին կամ վարչապետին՝ նրանցից յուրաքանչյուրի կամ նրանց համատեղ առաջարկության հիման վրա։

2. Եթե այդպիսի առաջարկությունը չի ստանում ձայների պահանջվող մեծամասնությունը, ապա Հանրապետության նախագահի և վարչապետի նախաձեռնությամբ, նախագահի հրովարտակով, պայմանագիր կնքելու նպատակահարմարության հարցը կարող է լուծել Համազգային հարցումը։ Հարցումը նշանակվում է Համազգային ժողովում լիազորություն տալու առթիվ անցկացվող քվեարկության օրվանից առնվազն 40, և ոչ ավելի, քան 50 օրվա ընթացքում։

3. Համազգային հարցման գրական պատասխանը միաժամանակ ժողովրդի անվստահության քվեն է Համազգային ժողովին։ Սահմանադրության 52 հոդվածի 5-րդ մասի «ա» պար-

բերությանը համապատասխան, հարցման արդյունքների հրապարակման օրվանից Համազգային ժողովի լիազորությունները դադարում են։ Եթե Հանրապետության նախագահը կամ վարչապետը պայմանագիր կնքելու կողմնակից չեն եղել, ապա Սահմանադրության 52 հոդվածի 5-րդ մասի «բ» և «գ» պարբերություններին համապատասխան, Համազգային ժողովի լիազորությունների դադարեցման հետ միաժամանակ դադարում են նաև Հանրապետության նախագահի կամ վարչապետի լիազորությունները։

4. Համազգային հարցման բացասական պատասխանը միաժամանակ ժողովրդի անվստահություն է Հանրապետության նախագահին և վարչապետին կամ նրանցից որևէ մեկին։ Անվստահության քվեն վերաբերում է նրանց երկուսին միաժամանակ, եթե պայմանագիր կնքելու համար լիազորություն ստանալու առաջարկությունը ներկայացվել է համատեղ։ Անվստահության քվեն կարող է վերաբերել նաև նրանցից յուրաքանչյուրին անհատապես՝ նրան, ով իր անունից է ներկայացրել պայմանագիր կնքելու լիազորություն ստանալու առաջարկը։

5. Եթե Սահմանադրության 51 հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված բնույթի պայմանագիրը կնքվել է համաժողովրդական հարցմամբ ժողովրդի տված լիազորության հիման վրա, ապա այն վավերացված է համարվում ժողովրդի կողմից, իր կնքման պահից։

Հոդված 94. Համազգային ժողովին է բացառապես պատկանում պատերազմի և խաղաղության հարցերը լուծելու իրավունքը։ Պատերազմ հայտարարելու դեպքում Հանրապետության նախագահը և վարչապետը կարող են ստանալ ժամանակավոր բնույթի լրացուցիչ լիազորություններ։

Հոդված 95—1. Համազգային ժողովը հաստատում է կառավարության ներկայացրած յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագիծը և նախորդ տարվա՝ պետական բյուջեի կատարման մասին Ֆինանսների նախարարի հաշվետվությունը։

2. Տարեկան պետական բյուջեի նախագիծը կառավարությունը ներկայացնում է ոչ ուշ, քան նախորդ բյուջետային տարվա հոկտեմբեր ամսվա առաջին տասնօրյակը։

3. Բնակչությունից գանձվող բոլոր տեսակի հարկերի ավելացումը կամ հարկի նոր տեսակներ սահմանելը կարող է կատարվել միայն տարեկան պետական բյուջեի շրջանակներում, այն հաստատելու հետ միաժամանակ։

4. Պետական բյուջեն հաստատվում է օրենքի ձևով։

5. Բյուջեի ժամանակավոր կատարում կարող է թույլատրվել միայն օրենքով, 3 ամսից ոչ ավելի ժամկետով։

Գլուխ 4

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Հոդված 96. Հանրապետության նախագահը հայ ազգի բոլոր հատվածների, Հայաստանի Հանրապետության միասնությունը մարմնավորող օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռությունն ու համաձայնությունը երաշխավորող բարձրագույն պաշտոնատար անձն է։

Հոդված 97—1. Հանրապետության նախագահը ընտրվում է ընտրիչների հանրության կողմից։ Ընտրիչների հանրությունը բաղկացած է Համազգային ժողովի անդամներից և նույն թվով տեղական ինքնավարության մարմիններից և արտերկրի հայ համայնքներից ընտրված ընտրիչներից։

2. Հանրապետության նախագահ կարող է ընտրվել Համազգային ժողովում ընտրվելու իրավունք ունեցող 40 տարին լրացրած յուրաքանչյուր հայ։

3. Հանրապետության նախագահը ընտրվում է 5 տարի ժամկետով։ Միևնույն անձնավորությունը երկու անդամից ավելի չի կարող ընտրվել Հանրապետության նախագահ։

4. Հանրապետության նոր նախագահի ընտրությունները տեղի են ունենում ոչ ուշ, քան նախագահի ընտրաշրջանի ժամկետը լրանալուց 40 օր առաջ, իսկ նրա լիազորությունների վաղակետ դադարեցման դեպքում՝ ոչ ուշ, քան 30 օր հետո։

5. Ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ։ Ընտրված է համարվում ընտրիչների ձայների բացարձակ մեծամասնությունը ստացած թեկնածուն։ Այդպիսի մեծամասնություն չկայանալու դեպքում անցկացվում է երկրորդ քվեափուլը, որին մասնակցում են առավել շատ ձայներ ստացած երկու թեկնածու։ Ընտրված է համարվում ձայների բացարձակ մեծամասնություն ստացած թեկնածուն։ Եթե թեկնածուներից և ոչ մեկի օգտին ձայների այդպիսի քանակ չի տրվում, անցկացվում է երրորդ՝ վերջին քվեափուլը, որն առավել

շատ ձայներ ստացած այդ երկու թեկնածուներից, ձայների հարաբերական մեծամասնությամբ ընտրում է Հանրապետության նախագահին։ Եթե Հանրապետության նախագահի ընտրությունների առաջին քվեարկությունն մասնակցում են երկու թեկնածու և նրանցից ոչ մեկի օգտին չի քվեարկում ընտրիչների բացարձակ մեծամասնությունը, ապա ընտրությունների երկրորդ քվեարկում այդ երկու թեկնածուներից մեկը, ընտրիչների ձայների հարաբերական մեծամասնությամբ ընտրվում է Հանրապետության նախագահ։

6. Հանրապետության նախագահի ընտրությունների հաջորդական քվեարկությունները անցկացվում են 48-ժամյա ընդմիջումով։

Հանրապետության նախագահի ընտրությունների մանրամասն կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը»։

Հոդված 98—1. Հանրապետության նորընտիր նախագահը իր պարտականությունների կատարմանն է անցնում իր նախորդի ընտրաշրջանի լրանալու օրը։

2. Հանրապետության նախագահը իր պաշտոնը ստանձնելու օրը Ամենայն Հայոց կաթողիկոսի, նախագահի ընտրիչների հանրության, Սահմանադրական դատարանի և կառավարության անդամների ներկայությամբ Սահմանադրական դատարանի նախագահին երդում է տալիս հայ ժողովրդին ու նրա արդար դատին, Հանրապետությանն ու նրա Սահմանադրությանը, մայր հայրենիքի և սփյուռքի հայ համայնքների միասնության ապահովմանը հավատարիմ ծառայելու իր սրբազան պարտականության մասին։

Հոդված 99. Հանրապետության նախագահի երդման հանդիսավոր արարողության օրը տոնական, ոչ աշխատանքային օր է։

Հոդված 100. Հանրապետության նախագահը երդման արարողությունից առաջ պաշտոնապես հայտարարում է բոլոր տեսակի կուսակցություններից, հասարակական-քաղաքական շարժումներից և ժողովրդի տարբեր հատվածներն ու խմբերը ներկայացնող կազմակերպությունների անդամությունից դուրս գալու մասին։

Հոդված 101 —1. Հանրապետության նախագահը միաժամանակ չի կարող լինել Համազգային ժողովի, որևէ այլ ներկայացուցչական մարմնի կամ կառավարության անդամ։

2. Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել նաև վարձատրվող որևէ պաշտոն, զբաղվել առևտրի կամ մասնավոր ձեռնարկատիրական գործունեությամբ կամ լինել այնպիսի ընկերության կամ կազմակերպության ղեկավար մարմինների անդամ, որոնց նպատակը շահույթ ստանալն է։

Հոդված 102. Հանրապետության նախագահի աշխատավարձը և գործունեության հետ կապված ծախսերի չափը որոշում է օրենքը։

Հոդված 103—1. Հանրապետության նախագահին ժամանակավորապես փոխարինում է Համազգային ժողովի նախագահը։ Համազգային ժողովի նախագահի պարտականությունները Համազգային ժողովի, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Համազգային ժողովի նախագահության որոշմամբ ժամանակավորապես կատարում է նրա տեղակալներից մեկը։

2. Հանրապետության նախագահի մահվան, հրաժարականի կամ պաշտոնազուրկ լինելու դեպքերում Համազգային ժողովի նախագահը ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում, նոր նախագահ ընտրելու համար հրավիրում է ընտրիչների հանրության նիստ։

Հոդված 104. Հանրապետության նախագահը Համազգային ժողովի հավանությամբ կամ խորհրդով նշանակում է վարչապետ, իսկ վերջինիս ներկայացմամբ՝ նաև նախարարների խորհրդի մյուս անդամներին։

Հոդված 105—1. Հանրապետության նախագահը նշանակում է Համազգային ժողովի ընտրությունները և Սահմանադրության 82 հոդվածի 3-րդ մասով, 90 հոդվածի 7-րդ և 8-րդ, 114 հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում վաղակետ արձակում այն, իսկ 93 հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում, երբ անվստահությունը վերաբերում է Համազգային ժողովին և վարչապետին, Համազգային ժողովը հայտարարում է արձակված։

2. Նշանակում է տեղական ինքնավարության մարմինների ընտրություններ։

Հոդված 106—1. Հանրապետության նախագահը նշանակում է Հանրապետության բուհերի ռեկտորներին և պրոֆեսորներին, գիտահետազոտական հաստատությունների տնօրեններին, հանրապետական գերատեսչությունների ղեկավարներին։

2. Նշանակում և ազատում է հանրապետության գլխավոր դատախազին, օկրուգային դատավորներին, իրականացնում է ներման իրավունքը։

3. Պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում հատուկ և պատվավոր կոչումներ։

4. Վարչապետի ներկայացմամբ նշանակում է Հանրապետության զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, շնորհում բարձրագույն զինվորական կոչումներ։

Հոդված 107. Հանրապետության նախագահը միջազգային հարաբերություններում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը, Համազգային ժողովի լիազորությամբ և գրաշրջանակներում կնքում է քաղաքական բնույթի միջազգային պայմանագրեր, իր հայեցողությամբ կամ վարչապետի համաձայնությամբ կնքում է այլ միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, վավերացնում վարչապետի կնքած ոչ քաղաքական բնույթի միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը, իր կամ վարչապետի նախաձեռնությամբ դրանց վավերացումը վերապահում Համազգային ժողովին։

Հոդված 108—1. Հանրապետության նախագահը նշանակում է այլ պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպաններ, դեսպանորդներ, ընդունում այլ պետություններից հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչման գրերը։

2. Վարչապետի ներկայացմամբ շնորհում է դիվանագիտական կոչումներ։

Հոդված 109—1. Հանրապետության նախագահը հրապարակում է պատերազմ հայտարարելու մասին Համազգային ժողովի որոշումը։

2. Երկրի դեմ զինված նախահարձակման դեպքում, երբ երկիրը գտնվում է փաստացի պատերազմական վիճակի մեջ և անհաղթահարելի հանգամանքների առկայությունը անհնար է դարձնում Համազգային ժողովի հրավիրումը, վարչապետի վերտվավերացմամբ ընդունած հրովարտակով հայտարարում է պատերազմական վիճակ։

Հոդված 110—1. Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ պետության անվտանգությանը, քաղաքացիների կյանքին ու գույքին, հասարակական կարգուկանոնին սպառնացող վտանգի կամ այլ արտակարգ պայմաններում նախապես տեղյակ պահելով Համազգային ժողովի նախագահին, հատուկ հրովարտակով Հանրապետության ողջ տարածքի կամ նրա մի մասի համար մինչև մեկ ամիս ժամկետով հայտարարում է արտակարգ դրություն։

2. Արտակարգ դրություն հայտարարելուց հետո Հանրապետության նախագահը Համազգային ժողովի առաջիկա նիստին է ներկայացնում արտակարգ դրություն հայտարարելու վճիռը հիմնավորող իր հաղորդումը։

3. Արտակարգ դրության ժամկետը կարող է երկարացվել միայն Համազգային ժողովի համաձայնությամբ։

Հոդված 111—1. Հանրապետության նախագահի յուրաքանչյուր ակտ ենթակա է վարչապետի կամ համապատասխան նախարարի վերավավերացմանը։ Այդպիսի կարգ չի պահանջվում վարչապետ նշանակելու, Համազգային ժողովը վաղաժամ արձակելու դեպքերում։

2. Հանրապետության նախագահը իր ընդունած ակտերի համար պատասխանատվություն չի կրում։ Պատասխանատվությունն ընկնում է նախագահի ակտը վերավավերացնող անձի վրա։

Հոդված 112. Հանրապետության նախագահը պատասխանատվություն է կրում արտադատական կարգով, պետական դավաճանության կամ սահմանադրության նկատմամբ ոտնձգություն կատարելու համար։

Մեղադրանք հարուցելու առաջարկությունն արվում է Համազգային ժողովի առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ։ Մեղադրանք հարուցելու մասին որոշումն ընդունվում է Համազգային ժողովի որակյալ մեծամասնության համաձայնությամբ։ Մեղադրանք հարուցելուց հետո Սահմանադրական դատարանի կարգադրությամբ նախագահի լիազորությունները մինչև Սահմանադրական դատարանում գործի քննության ավարտը ժամանակավորապես դադարեցվում են։

Գլուխ 5

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոդված 113. Նախարարների խորհուրդը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է։ Այն կազմված է վարչապետից և նախարարներից։ Գործադիր իշխանությունը պատկանում է վարչապետին և նախարարների խորհրդին։

Հոդված 114—1. Համազգային ժողովի հավանությամբ կամ խորհրդով վարչապետ նշանակում է Հանրապետության նախագահը։ Հանրապետության նախագահը նոր գումարման Համազգային ժողովին է ներկայացնում վարչապետի երկու թեկնածու։ Առանց նախնական քննարկման հավա-

սությունն է ստանում ձայների բացարձակ մեծամասնությունը ստացած թեկնածուն։ Քվեարկությունը կատարվում է ըստ Նախագահի ներկայացրած հերթականության։ Համազգային ժողովի հավանությանն արժանացած թեկնածուին Հանրապետության Նախագահը նշանակում է վարչապետ։

2. Եթե առաջադրված թեկնածուներից և ոչ մեկը ձայների պահանջվող մեծամասնությունը չի ստանում, ապա վարչապետի թեկնածու առաջադրելու իրավունքը անցնում է Համազգային ժողովին։ Համազգային ժողովը հաջորդ ժամկետի ընթացքում ձայների բացարձակ մեծամասնությամբ Նախագահին խորհուրդ է տալիս վարչապետի պաշտոնում նշանակել իր ընտրած թեկնածուին։ Հանրապետության Նախագահը բավարարում է Համազգային ժողովի խորհուրդը և նրա ընտրած թեկնածուին նշանակում է վարչապետ։

3. Եթե Համազգային ժողովը այդ ժամկետի ընթացքում պահանջվող քանակի ձայներով թեկնածու չի առաջադրում, ապա Հանրապետության Նախագահը հաջորդ ժամկետի ընթացքում Համազգային ժողովին է ներկայացնում վարչապետի նոր թեկնածու։ Եթե 48 ժամվա ընթացքում Համազգային ժողովը բացարձակ մեծամասնությամբ հավանություն չի տալիս նոր առաջադրված թեկնածուին, ապա Հանրապետության Նախագահը արձակում է Համազգային ժողովը և միաժամանակ նշանակում խորհրդարանական ընտրություններ։

Հոդված 115. Վարչապետը և նրա կողմից առաջադրված նախարարները նշանակվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով։ Նախարարները նույն կարգով ազատվում են իրենց զբաղեցրած պաշտոններից, վարչապետի ներկայացմամբ։

Հոդված 116—1. Վարչապետը իր հայեցողությամբ նախարարներից մեկին նշանակում է փոխվարչապետ։

2. Նախքան իրենց պարտականությունների կատարմանն անցնելը, վարչապետը և նախարարները Համազգային ժողովին երդում են տալիս հայ ազգին և Հայաստանի Հանրապետությանը հավատարիմ ծառայելու, Սահմանադրությունը և օրենքները անշեղ պահպանելու և կիրառելու մասին։

Հոդված 117—1. Վարչապետն ապահովում է օրենքների կիրառումը, սահմանում ներքին և արտաքին քաղաքականության հիմնադրույթները, դրանց շրջանակներում որոշում և ղեկավարում է նախարարների խորհրդի քաղաքականությունը և դրա համար անձնական պատասխանատվություն է կրում Համազգային ժողովի առաջ։

2. Նախարարները համատեղ պատասխանատվություն են կրում նախարարների խորհրդի գործունեության համար և անհատապես՝ իրենց գլխավորած նախարարությունների համար։

3. Նախարարները կառավարության ընդհանուր քաղաքականության շրջանակներում ինքնուրույն վարում են իրենց գլխավորած նախարարությունների գործերը։

Հոդված 118—1. Օրգանական օրենքը սահմանում է նախարարությունների քանակը և ֆունկցիաները, նախարարների խորհրդի նախագահության կազմը և ֆունկցիաները, իսկ նախարարների խորհրդի աշխատակարգը՝ նախարարների խորհրդի, նրա նախագահության և նախարարությունների գործունեության կազմակերպման մանրամասն կարգը։

2. Նախարարությունների գործունեությունը կազմակերպվում է նախարարների խորհրդի կողմից հաստատված Կանոնագրության հիման վրա։

Հոդված 119. Վարչապետը իրականացնում է երկրի պաշտպանունակության ամրապնդման, զինված ուժերի կառուցման ընդհանուր ղեկավարությունը։

Խաղաղ պայմաններում զինված ուժերի հրամանատարությունն անմիջականորեն իրականացնում է պաշտպանության նախարարը։ Ընդհանուր զինապարտության մասին օրենքի շրջանակներում նա է որոշում ամենամյա զորակոչի ենթակա քաղաքացիների ընդհանուր թվաքանակը, հրամաններ արձակում զորակոչ անցկացնելու և զորացրման մասին, նշանակում բանակի ավագ և միջին հրամանատարական կազմը։

Պաշտպանության նախարարի՝ այդ առթիվ արձակվող բոլոր հրամանները ենթակա են վարչապետի վերավերացմանը։

Պատերազմական վիճակ հայտարարելու պահից զինված ուժերի անմիջական հրամանատարությունն անցնում է վարչապետին։

Հոդված 120—1. Որոշակի տնտեսական կամ սոցիալական ծրագրերի իրականացման համար Համազգային ժողովը որոշակի ժամկետով նախարարների խորհրդին կարող է լիազորել ընդունել օրենքի ուժ ունեցող հրամանագրեր։

2. Օրենքի ուժ ունեցող հրամանագրերը չեն կարող վերացնել կամ սահմանափակել գործող օրենքները։

3. Օրենքի ուժ ունեցող հրամանագրերը ենթակա են Համազգային ժողովի ընթացիկ կամ հաջորդ նստաշրջանի հաստատմանը։

Հոդված 121—1. Համազգային ժողովը վարչապետին կամ կառավարությանը կարող է անվստահության քվե հայտնել, պայմանով, եթե այդպիսի առաջարկությունը քվեարկության դնելը պաշտպանում է Համազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդը։ Քվեարկությունն անցկացվում է այդպիսի առաջարկությունն ընդունելուց առնվազն 48, բայց ոչ ուշ, քան 72 ժամ հետո։ Ոչ աշխատանքային օրերը այդ ժամկետի մեջ չեն մտնում։

Անվստահության քվեն ընդունվում է Համազգային ժողովի որակյալ մեծամասնության համաձայնությամբ։

2. Վարչապետին կամ կառավարությանը անվստահություն հայտնելու դեպքում կառավարության ամբողջ կազմը պարտավոր է հրաժարական տալ։ Հանրապետության նախագահը պարտավոր է բավարարել Համազգային ժողովի պահանջը և ընդունել կառավարության հրաժարականը։

3. Հանրապետության նախագահը կառավարության հրաժարականն ընդունելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում Սահմանադրության 114 հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան, նշանակում է նոր վարչապետ և Սահմանադրության 115 հոդվածին համապատասխան կազմավորում նոր կառավարություն։

4. Սահմանադրության 114 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված պայմաններում Համազգային ժողովի կողմից Հանրապետության նախագահի՝ Վարչապետի պաշտոնի համար առաջադրած թեկնածուին հավանություն չտալու կամ թեկնածու չառաջադրելու դեպքում Հանրապետության նախագահը վաղակետ արձակում է Համազգային ժողովը և միաժամանակ, Սահմանադրության 114 հոդվածի 3-րդ մասին համապատասխան, նշանակում խորհրդարանական ընտրություններ։

Հոդված 122. Համազգային ժողովի՝ նախարարների խորհրդին անվստահություն հայտնելուց հետո հաջորդ 18 ամսում արդեն իր սեփական նախաձեռնությամբ անվստահություն հայտնելու դեպքում, Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ կամ իր նախաձեռնությամբ վաղակետ արձակում է Համազգային ժողովը։ Նոր ժամկետի ընթացքում այդպիսի առաջարկություն կամ նախաձեռնություն չլինելու դեպքում գործում է Սահմանադրության 121 հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը։

Հոդված 123. Հանրապետության նախագահը վաղակետ արձակված Համազգային ժողովին, հրաժարական տված կառավարությանը խնդրում է կատարել իրենց պարտականությունները մինչև նոր գումարման Համազգային ժողովի առաջին նստաշրջանի բացումը, նոր կառավարության կազմավորումը։ Համազգային ժողովը, վարչապետը և նախարարների խորհուրդը պարտավոր են կատարել Հանրապետության նախագահի խնդրանքը։

Հոդված 124—1. Համազգային ժողովը պարսավանքի բանաձև ընդունելու միջոցով կարող է անհատական անվստահություն հայտնել նախարարներին և հանրապետական գերատեսչությունների ղեկավարներին։

Այդպիսի բանաձևի նախագիծ կարող են առաջարկել Համազգային ժողովի առնվազն երկու խորհրդարանական խումբ։ Բանաձևի նախագիծը ստանալուց հետո Համազգային ժողովի նախագահը ոչ ուշ, քան հաջորդ օրը, բանաձևի նախագծի կրկնօրինակը ուղարկում է վարչապետին և համապատասխան նախարարին կամ գերատեսչության ղեկավարին։

2. Վարչապետի, համապատասխան նախարարի կամ գերատեսչության ղեկավարի մասնակցությամբ պարսավանքի բանաձևի նախագիծը քննարկվում է Համազգային ժողովի նիստում այն ներկայացվելուց առնվազն 10, բայց ոչ ուշ, քան 15 օր հետո։ Նիստը սկսվում է բանաձևի նախագիծը ներկայացնող կողմի հիմնավորող և վարչապետի կամ համապատասխան նախարարի, գերատեսչության ղեկավարի պատասխան ելույթով։ Եթե Համազգային ժողովը ձայների մեծամասնությամբ որոշում է քվեարկության դնել բանաձևի նախագիծը, ապա վիճաբանություններն ավարտվում են վարչապետի կամ նախարարի, գերատեսչության ղեկավարի ելույթով և քվեարկությամբ։

3. Պարսավանքի բանաձևը համարվում է ընդունված, եթե նրա օգտին քվեարկում է Համազգային ժողովի բացարձակ մեծամասնությունը։

4. Անվստահություն ստացած նախարարը կամ գերատեսչության ղեկավարը պարտավոր են հրաժարական տալ։

Հոդված 125. Վարչապետը իր սեփական նախաձեռնությամբ կամ նախարարների խորհրդի որոշմամբ կարող է Համազգային ժողովում դնել վարչապետի անվստահության քվեի

հարցը։ Այդպիսի հարց կարող է դրվել միայն նախարարների խորհրդում քննարկվելուց հետո։ Հարցը կարող է Համազգային ժողովում դրվել բացառապես վարչապետի կողմից։

Հոդված 126—1. Վարչապետը, նախարարները և հանրապետական գերատեսչությունների ղեկավարները իրենց նշանակման պահից կորցնում են Համազգային ժողովի, ցանկացած այլ ներկայացուցչական մարմնի անդամությունը։

2. Վարչապետը, նախարարները և հանրապետական գերատեսչությունների ղեկավարները չեն կարող զբաղեցնել նաև վարձատրվող որևէ այլ պաշտոն, զբաղվել առևտրական կամ մասնավոր ձեռնարկատիրական որևէ այլ գործունեությամբ, լինել այնպիսի ընկերության կամ կազմակերպության ղեկավար մարմինների անդամ, որոնց նպատակը շահույթ ստանալն է։

Հոդված 127. Վարչապետը և նախարարները արտադատական պատասխանատվության են ենթարկվում իրենց պարտականությունների կատարման ընթացքում կատարած հանցագործությունների համար։ Մեղադրանքը հարուցում է Համազգային ժողովը գաղտնի քվեարկությամբ, ձայների բացարձակ մեծամասնությամբ։ Գործը վարում է Հանրապետության սահմանադրական դատարանը։

Գլուխ 6

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 128. Դատական իշխանությունն իրականացնում են Սահմանադրական դատարանը, Գերագույն դատարանը, Բարձրագույն վճռաբեկ դատարանը, օկրուգային և տեղամասային դատարանները։

Հոդված 129—1. Սահմանադրական դատարանի անդամներն ընտրվում են ընտրական օրենսգրքով նախատեսված պայմաններով և կարգով։

2. Սահմանադրական դատարանի անդամ կարող են լինել Համազգային ժողովում ընտրվելու իրավունք ունեցող 40 տարին լրացրած անձինք, ովքեր ունեն բարձրագույն իրավաբանական կրթություն, իրավաբանական ուսումնական և գիտական հաստատություններում դասավանդելու և գիտական աշխատանքի, դատարանում, դատախազական և փաստաբանական մարմիններում աշխատելու առնվազն 15 տարվա փորձ։

3. Սահմանադրական դատարանի լիազորությունների ժամկետը 10 տարի է։ Յուրաքանչյուր 5 տարի նրա կազմի հիսուն տոկոսը թարմացվում է։

4. Սահմանադրական դատարանը կազմված է 12 դատավորից։ Սահմանադրական դատարանի նախագահը ընտրվում է Սահմանադրական դատարանի անդամների կողմից։

Հոդված 130. Սահմանադրական դատարանի անդամը միաժամանակ չի կարող լինել Համազգային ժողովի պատգամավոր կամ նախարարների խորհրդի անդամ։ Անհամատեղելիության մյուս դեպքերը սահմանում է օրգանական օրենքը։

Հոդված 131. Սահմանադրական դատարանի անդամության համար առաջադրված թեկնածուն նախքան ընտրությունները դադարեցնում է իր կուսակցական պատկանելությունը և քաղաքական նպատակներ հետապնդող որևէ կազմակերպության անդամակցությունը։

Հոդված 132. Սահմանադրական դատարանի անդամները նախքան իրենց պարտականությունների կատարմանն անցնելը, օրենքով սահմանված ձևով ու արարողությամբ Համազգային ժողովին երդում են տալիս Հայաստանի Հանրապետությանը, նրա Սահմանադրությանն ու օրենքներին հավատարիմ ծառայելու մասին։

Հոդված 133. Սահմանադրական դատարանը եզրակացություններ է տալիս և վճիռներ կայացնում հետևյալ գործերով՝

Առաջարկվող սահմանադրական փոփոխությունների սահմանադրականության մասին,

Օրգանական օրենքների և օրենսգրքերի Սահմանադրությանը համապատասխան լինելու մասին,

Համազգային ժողովի, նախարարների խորհրդի աշխատակարգերի, Համազգային ժողովի մշտական հանձնաժողովների և նախարարությունների կանոնադրությունների՝ սահմանադրությանը համապատասխան լինելու մասին,

Քաղաքական բնույթի միջազգային պայմանագրերի սահմանադրականության մասին,

Օրենքների, հրամանագրերի, կառավարության ընդունած օրենքի ուժ ունեցող հրամանագրերի և մյուս ակտերի սահմանադրականության մասին,

Օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև իրավասության վեճերի մասին,

Հանրապետության նախագահի ընտրությունների վերաբերյալ վեճերի մասին,

Համազգային ժողովի պատգամավորների ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճերի մասին,

Հանրաքվեներին, հարցումներին և հանրագրերին վերաբերող վեճերի մասին,

Հանրապետության Նախագահի, վարչապետի և նախարարների նկատմամբ հարուցված մեղադրանքով, անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի անդամների նկատմամբ հարուցված մեղադրանքով,

Համազգային ժողովի պատգամավորին կալանելու կամ նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու օրինականության մասին,

Արդարադատության նախարարության առաջարկությամբ առանձին անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների դադարեցման կամ սահմանափակման վերաբերյալ։

Հոդված 134. Սահմանադրական դատարանը հետևում է Հանրապետության Նախագահի ընտրությունների օրինականությանը և հայտարարում ընտրությունների արդյունքները։

Հոդված 135—1. Սահմանադրական դատարանը վերահսկում է համազգային հանրաքվեների, հարցումների ընթացքը և հայտարարում դրանց արդյունքները։

2. Վավերացնում և հրապարակում է Անմիջական ժողովրդավարության համազգային հանձնախմբի ընտրությունների արդյունքները։

3. Վավերացնում է հանրապետական հանրագրերի օրինականությունը։

Հոդված 136. Օրգանական օրենքները, օրենսգրքերը, նախքան դրանց հրապարակումը, Համազգային ժողովի աշխատակարգը, Համազգային ժողովի մշտական հանձնաժողովների կանոնագրությունները և դրանցում կատարվող փոփոխությունները նախքան գործողության մեջ դրվելը, ուղարկվում են Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու մասին եզրակացություն տալու համար։

Հոդված 137—1. Հանրապետության Նախագահը, վարչապետը, Համազգային ժողովի Նախագահությունը, Համազգային ժողովի առնվազն 30 պատգամավոր նախքան օրենքի հրապարակումը կարող են վիճարկել դրա՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու հարցը։ Այդպիսի հայցի առթիվ Սահմանադրական դատարանի առաջարկությամբ Հանրապետության Նախագահը կասեցնում է օրենքի հրապարակումը մինչև Սահմանադրական դատարանի որոշում կայացնելը. կասեցվում է նաև օրենքի հրապարակման ժամկետի ընթացքը։

2. Նախարարների խորհրդի կողմից անհետաձգելի համարվող օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու մասին որոշումը Սահմանադրական դատարանը կայացնում է ոչ ավելի, քան 10 օրվա ընթացքում։

Հոդված 138—1. Գործող օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու հարցը կարող է վիճարկվել բացառապես տեղական ինքնավարության և կառավարման մարմնի համատեղ բողոքով և ժողովրդական նախաձեռնությամբ, առնվազն 30 հազար ընտրողների ստորագրությամբ ներկայացված հանրագրի հիման վրա։

2. Այդպիսի դեպքերում օրենքը շարունակում է գործել մինչև Սահմանադրական դատարանի կողմից նրա՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու հարցի մասին որոշում կայացնելը։

Հոդված 139. Սահմանադրական դատարանի կազմակերպման ու գործունեության դատավարության մանրամասն կարգը որոշում է «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը, կազմակերպումը, ֆունկցիաները և իրավասությունը» օրգանական օրենքը։

Հոդված 140—1. Գերագույն դատարանը Հայաստանի Հանրապետության գործող իրավունքի միասնականությունն ապահովելու համար վերահսկողություն է իրականացնում բարձրագույն վճռաբեկ դատարանի, օկրուգային և տեղամասային դատարանների գործունեության նկատմամբ։

2. Գերագույն դատարանի անդամներն ընտրվում են Համազգային ժողովի կողմից, Հանրապետության Նախագահի առաջարկությամբ, դատավորական, դատախազական, փաստաբանական կամ դիտական աշխատանքի առնվազն 15 տարվա փորձ ունեցող անձանցից, 6 տարի ժամանակով։ Գերագույն 3 տարի նրա կազմի հիսուն տոկոսը թարմացվում է։

Հոդված 141. Գերագույն դատարանը բաղկացած է Քաղաքացիական գործերի բարձրագույն պալատից և Քրեական գործերի բարձրագույն պալատից։

Հոդված 142. Գերագույն դատարանի ընդդատությունը, իրավասության շրջանակները, դատավարությունը, թվակազմը, գործունեության կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանը. կազմակերպումը, ֆունկցիաները և իրավասությունը» օրդանական օրենքը։

Հոդված 143—1. Բարձրագույն վճռաբեկ դատարանը կողմերի վճռաբեկ գանգատի հիման վրա օկրուգային դատարանների դատավճիռները բեկանող բարձրագույն դատարան է։

2. Բարձրագույն վճռաբեկ դատարանի անդամները ընտրվում են Համազգային ժողովի կողմից, Հանրապետության նախագահի առաջարկությամբ, դատավորական, փաստաբանական կամ դիտական աշխատանքի առնվազն 15 տարվա փորձ ունեցող անձանցից, 6 տարի ժամանակով։ Յուրաքանչյուր 3 տարի նրա կազմի 50 տոկոսը թարմացվում է։

Հոդված 144. Բարձրագույն վճռաբեկ դատարանը բաղկացած է Քաղաքացիական գործերի ատյանից և Քրեական գործերի ատյանից։

Հոդված 145. Բարձրագույն վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակները, դատավարությունը, թվակազմը, գործունեության կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության Բարձրագույն վճռաբեկ դատարանը. կազմակերպումը, ֆունկցիաները և իրավասությունը» օրդանական օրենքը։

Հոդված 146—1. Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է մոտավորապես հավասար թվով ազգաբնակչություն ընդգրկող դատական օկրուգների։ Օկրուգներում դատական իշխանությունը, որպես առաջին ատյանի ընդհանուր դատարաններ, իրականացնում են օկրուգային դատարանները։

2. Օկրուգային դատավորներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ իր կողմից նշանակվող երդվյալների խորհրդի առաջարկությամբ, մրցութային հիմունքներով։

Հոդված 147—1. Դատական օկրուգները բաժանվում են դատական տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրում ստեղծվում են տեղամասային դատարաններ։ Տեղամասային դատարանները ոստիկանության առաջարկությամբ լուծում են կասկածյալների նախնական կալանքի, նրանց բնակարաններում խուզարկություն կատարելու հարցերը, դատաքննությամբ լսում նվազ նշանակության քրեական և քաղաքացիական գործեր։

2. Տեղամասային դատավորներին նշանակում է արդարադատության նախարարը՝ իր կողմից ստեղծված երդվյալների խորհրդի առաջարկությամբ, մրցութային հիմունքներով։

Գլուխ 7

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 150. Հայաստանի Հանրապետության միասնական և անբաժանելի տարածքը կազմված է վարչատարածքային միավորներից։ Դրանց անվանումները, սահմաններն ու չափերը, կազմավորումը և վերակազմավորումը պայմանավորված են տնտեսական պահանջմունքներով, երկրի պաշտպանունակության ամրապնդման շահերով, ազգային սովորույթներով ու որոշվում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը» օրդանական օրենքով և կարող են փոփոխության ենթարկվել բացառապես օրենքով։

Հոդված 149—1. Սոսկ տեղական նշանակության որևէ հարց չի կարող լուծվել այլ կերպ, քան տեղական ազգաբնակչության կամ նրա կողմից ընտրված տեղական ինքնավարության մարմինների միջոցով։

2. Հանրապետության շահերի համար նշանակալի, բայց վարչատարածքային միավորի համար կենսական նշանակություն ունեցող ցանկացած հարց լուծվում է հանրապետական և տեղական մարմինների փոխադարձ համաձայնությամբ, տեղական շահերի հաշվառմամբ։

3. Հանրապետության շահերի համար կենսական նշանակության հարցերը լուծվում են խորհրդարանի կամ նախարարների խորհրդի որոշմամբ, տեղական ազգաբնակչության շահերը հաշվի առնելու և արդարացի փոխհատուցման հիման վրա։

Հոդված 150—1. Տեղական ինքնավարությունը իրականացվում է անմիջական ժողովրդավարությամբ կամ տեղական ազգաբնակչության կողմից անմիջականորեն ընտրվող ինքնավարության մարմինների միջոցով։

2. Անմիջական ժողովրդավարությունը իրականացվում է հանրաքվեի, հարցման, ընտրությունների և հանրագրի, իսկ փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող բնակավայրերում չափահաս ազգաբնակչության ընդհանուր ժողովի միջոցով։

Հոդված 151. Տեղական կառավարումն իրականացվում է անմիջական ժողովրդավարությամբ, Սահմանադրության 150 հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով կամ տեղական ինքնավարության մարմինների կողմից նշանակվող կառավարման մարմինների միջոցով։

Հոդված 152. Փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող բնակավայրերում տեղական ինքնավարությունն իրականացվում է բացառապես անմիջական ժողովրդավարությամբ՝ բնակավայրի չափահաս ազգաբնակչության ընդհանուր ժողովի միջոցով, իսկ կառավարումը նաև բնակավայրի ավագի միջոցով։

Հոդված 153. Տեղական ինքնավարության և կառավարման սահմաններն ու ֆունկցիաները, դրանք իրականացնող մարմինների իրավասությունը, տեղական ինքնավարության և կառավարման մարմինների՝ միմյանց և հանրապետական մարմինների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնավարությունը և կառավարումը» օրգանական օրենքով։

Հոդված 154. Մայրաքաղաք Երևանի իրավական վիճակը, նրա տեղական ինքնավարության սահմաններն ու վարչական ֆունկցիաները, ինքնավարության և կառավարման մարմինների համակարգը, դրանց իրավասությունն ու փոխհարաբերությունները հանրապետության կենտրոնական մարմինների հետ կարգավորում է «Երևան քաղաքի կարգավիճակի մասին» օրգանական օրենքը։

ԱՆՑՈՂԻԿ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

I

Սույն Սահմանադրության ընդունման պահից դադարում են գործելուց նախկին ՀԽՍՀ Սահմանադրության գործող նորմերը, սույն Սահմանադրությանը հակասող բոլոր օրենքներն ու մյուս իրավական ակտերը։

II

Գերագույն խորհուրդը մինչև առաջին գումարման Համազգային ժողովի առաջին նստաշրջանը նիստերի կարող է հրավիրվել կամ միայն Հանրապետության նախագահի և վարչապետի համատեղ որոշմամբ, կամ Գերագույն խորհրդի առնվազն 100 պատգամավորների առաջարկությամբ։

III

Սահմանադիր ժողովը համաժողովրդական քվեարկությամբ Սահմանադրություն ընդունելու մասին հայտարարության հետ միաժամանակ, Սահմանադրություն ընդունելու օրից առնվազն 40 օր անց, բայց ոչ ուշ, քան 50-րդ օրը, նշանակում է Համազգային ժողովի ընտրություններ։

IV

Առաջին գումարման Համազգային ժողովի ընտրություններն անցկացվում են «Հայաստանի Հանրապետության Համազգային ժողովի ընտրությունների մասին» Հանրապետության նախագահի՝ օրենքի ուժ ունեցող ժամանակավոր հրովարտակի կամ վարչապետի՝ օրենքի ուժ ունեցող ժամանակավոր հրամանագրի հիման վրա։

«Հայաստանի Հանրապետության Համազգային ժողովի ընտրությունների մասին» ժամանակավոր հրովարտակը կամ ժամանակավոր հրամանագիրը ընդունվում և հրապարակվում է սույն Սահմանադրության ընդունման օրից հետո, 5 օրվա ընթացքում։

Առաջին գումարման Համազգային ժողովի առաջին նստաշրջանը հրավիրվում է Հանրապետության նախագահի հրովարտակով կամ վարչապետի հրամանագրով՝ ոչ. ուշ, քան ընտրություններից հետո առաջին կիրակիին հաջորդող Երկուշաբթի օրը։ Այդ ժամկետի ընթացքում նստաշրջան չհրավիրվելու դեպքում Համազգային ժողովը սեփական իրավունքով նստաշրջանի է հավաքվում ընտրություններին հաջորդող առաջին կիրակիից հետո, առաջին հինգշաբթի օրը։

Իր գործունեության առաջին երկու ամսվա ընթացքում առաջին գումարման Համազգային ժողովը վաղակետ արձակման ենթակա չէ։

V

Հանրապետության նախագահը սույն Սահմանադրության շրջանակներում շարունակում է իր լիազորությունները մինչև հանրապետության նոր Նախագահի ընտրությունները։

Հանրապետության նախագահի ընտրությունները նշանակում է Սահմանադրական դատարանը՝ առաջին գումարման Համազգային ժողովի առաջին նստաշրջանի բացմանը հաջորդող առնվազն 40-րդ, բայց ոչ ուշ, քան 50-րդ օրը։

Մինչև հանրապետության նոր Նախագահի ընտրությունները, Հանրապետության նախագահի բոլոր ակտերը ենթակա են վարչապետի վերավավերացմանը։

VI

Համազգային ժողովի պատգամավորների հետ միասին, նրանց թվաքանակին համապատասխան թվով, Հանրապետության նախագահի ընտրություններին մասնակցում են շրջանային, քաղաքային, քաղաքային շրջանների խորհուրդների պատգամավորներից ընտրված ընտրիչները, որոնք ընտրվում են վարչատարածքային միավորների ազգաբնակչության թվաքանակի համամասնությամբ։

Երևան և Գյումրի քաղաքների խորհուրդների պատգամավորներից ընտրիչներն ընտրվում են այդ քաղաքների մեջ մտնող շրջանային խորհուրդների ներկայացուցչության հաշվին, դրանց ընդհանուր թվի 10—15 տոկոսի չափով։

Առաջիկա նախագահական ընտրություններն անցկացվում են սույն Սահմանադրությամբ ամրագրված կարգով, Համազգային ժողովի ընդունած «Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» ժամանակավոր օրենքի հիման վրա։

VII

Հանրապետության կառավարությունը սույն Սահմանադրության շրջանակներում շարունակում է իր լիազորությունները մինչև Հանրապետության նախագահի առաջիկա ընտրությունները։

Սահմանադրական դատարանի ընտրությունները նշանակվում են Սահմանադիր ժողովի կողմից, Համազգային ժողովի ընտրությունների հետ միաժամանակ։

VIII

Սահմանադրական դատարանի ընտրություններն անցկացվում են «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ընտրությունների մասին» Հանրապետության նախագահի՝ օրենքի ուժ ունեցող ժամանակավոր հրովարտակի կամ վարչապետի՝ օրենքի ուժ ունեցող ժամանակավոր հրամանագրի հիման վրա։

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ընտրությունների մասին» ժամանակավոր հրովարտակը կամ ժամանակավոր հրամանագիրը ընդունվում և հրապարակվում է սույն Սահմանադրության ընդունման օրից՝ 5 օրվա ընթացքում։

Մինչև Սահմանադրական դատարանի ընտրությունները, նրա ֆունկցիաներն ու իրավասությունն իրականացնում է Գերագույն դատարանը։

IX

Սահմանադրական դատարանի առաջին կազմի ընտրություններից հետո 59-րդ ամսում անցկացվում են նրա կազմի կեսի ընտրությունները։ Ընտրությունների ավարտից հետո նրա առաջին կազմի անդամների միջև կատարված վիճակահանությամբ որոշվում է նրանց՝ նորընտիր անդամներով փոխարինելու հարցը։

Վիճակահանությունն համատեղ անցկացնում են Հանրապետության նախագահը, Համազգային ժողովի նախագահը և վարչապետը։

X

Անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի առաջին կազմի ընտրությունն անցկացվում են Համազգային ժողովի ընտրությունների հետ միաժամանակ, «Անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի ընտրությունների մասին» Հանրապետության Նախագահի՝ օրենքի ուժ ունեցող ժամանակավոր հրովարտակի կամ վարչապետի՝ օրենքի ուժ ունեցող ժամանակավոր հրամանագրի հիման վրա։

«Անմիջական ժողովրդավարության Համազգային հանձնախմբի ընտրությունների մասին» ժամանակավոր հրովարտակը կամ ժամանակավոր հրամանագիրը ընդունվում է հրապարակվում է սույն Սահմանադրության ընդունման օրից հետո 5 օրվա ընթացքում։

XI

Տեղական ինքնավարության մարմինների ընտրությունն անցկացվում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը» օրդանական օրենքն ընդունելուց հետո, ոչ ուշ, քան սույն Սահմանադրության կիրարկման առաջին տարվա ընթացքում։

Մինչև տեղական ինքնավարության մարմինների ընտրությունները, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներում, Երևան և Գյումրի քաղաքների սահմաններում տեղական ինքնավարությունն և կառավարման մարմինների ֆունկցիաներն ու իրավասությունը սույն Սահմանադրությանը համապատասխան և դրան չհակասող սահմաններում իրականացնում են շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանների, գյուղական ու ավանային խորհուրդները և դրանց գործադիր կոմիտեները։

XII

«Հայաստանի Հանրապետության տեղական ինքնավարությունը և կառավարումը» օրդանական օրենքն ընդունվում է «Երևան քաղաքի Կարգավիճակի մասին» և «Գյումրի քաղաքի կարգավիճակի մասին» օրդանական օրենքների հետ միաժամանակ, ոչ ուշ, քան «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը» օրդանական օրենքն ընդունելուց հետո, հաջորդ երեք ամսվա ընթացքում։

XIII

Սահմանադրության կիրարկման առաջին երեք տարիների ընթացքում սույն Սահմանադրությամբ նախատեսված կարգով գործող դատական մարմինները փոխարինվում են սույն Սահմանադրությամբ ամրագրված դատական մարմինների համակարգով։

Այդ նույն ժամանակամիջոցում սույն Սահմանադրությանը համապատասխան, փոփոխությունների է ենթարկվում Հանրապետության գործող դատական իրավունքը։

XIV

Սույն Սահմանադրության տեքստում ենթադրվող Համազգային ժողովի պարզ մեծամասնությունը նոա օրինական նիստին ներկա եղող պատգամավորների մեծամասնությունն է։ Համազգային ժողովի նիստն օրինական է, եթե մասնակցում են առնվազն 61 պատգամավոր։

Հարաբերական մեծամասնությունը Համազգային ժողովի օրինական նիստին ներկա եղող պատգամավորների մեծամասնությունն է։ Համազգային ժողովի պատգամավորների հարաբերական մեծամասնության նվազագույն թիվը 31-ն է։

Բացարձակ մեծամասնությունը Համազգային ժողովի ամբողջ կազմի պարզ մեծամասնությունն է։

Համազգային ժողովի պատգամավորների բացարձակ մեծամասնության նվազագույն թիվը 61-ն է։

Որակյալ մեծամասնությունը Համազգային ժողովի ամբողջ կազմի առնվազն երկու երրորդն է։ Համազգային ժողովի պատգամավորների որակյալ մեծամասնության նվազագույն թիվը 80-ն է։

Համազգային ժողովի որևէ մեծամասնություն որոշելու հիմք է որոշումն ընդունելու պահին Համազգային ժողովի զբաղեցրած մանդատների թվաքանակը։

XV

Սույն Սահմանադրությունն ուժի մեջ է մտնում իր հրապարակման պահից։ Սահմանադրության ընդունման օրը ոչ աշխատանքային, առնական օր է։